

## ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՋ ԱՆՀՐԱՁԵՅ Է ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հայ ընթերցողներին քաջ ծանօթ պ. Գ. Ենգիբարեանը  
«Լուսայի» անցեալ տարուայ վերջին գրքոյկում հրատարակած  
իւր մի յօդուածով յարուցանում է այն կենսական նշանակու-  
թիւն ունեցող «արցը թէ «Ո՞րը պիտի լինի հայ ազգի քաղա-  
քականութիւնը»:

Այն օրից, երբ Թիւրքիայի հայի գոյութիւնը վտանգի են-  
թարկուեց և երբ նոյն վտանգը սպառնաց նաև Կովկասի հայե-  
րին, անջուշտ ամեն մի հայի մտքով անցաւ այդ հարցը. սա-  
կայն որ հայը կարող էր և հսարաւորութիւն ունէր ազգային  
քաղաքականութեան հարց բարձրացնելու, քանի որ Կ. Պօլսի  
և Պետերբուրգի պօլիտիկոսները հայ անունն անդամ լսել չէին  
կամենում:

Մի այսքան հրատապ խնդիր յարուցանելու և ազգային  
սեղանի վրայ դնելու ամենանպաստաւոր րոպէն է այժմ:  
Մենք վայելում ենք մամուլի ու խօսքի ազատութիւն. հսարա-  
ւորութիւն ունենք գրելու, խօսելու, խորհրդակցելու, մի բան,  
որի տևականութեան այնքան էլ յոյս դնել կարելի չէ: Ամենա-  
մեծ խելացիութիւնը բարեյաշող ըոպէից օգտուել գիտենալն է:  
Բացի այդ, մեր շուրջը կատարում են այնպիսի պատմական  
նշանակութիւն ունեցող երևոյթներ և այնքան խրատական,  
որնց առջև աչք փակելը մահացու յանցանը չէ: Այն, ինչ որ  
կատարում է Ռուսաստանում, անհրաժեշտօրէն պիտի ազդէ  
նաև այն պետութիւնների վրայ, ուր նոյնքան բազմաթիւ են  
բռնութեան ճանկերում հեծողները: Ռուսաստանի բռնութեան  
շղթայի ամեն մի օդակի թուլանալու հետ պիտի թուլանան  
և ուրիշ պետութեանց բռնութեան շղթաների օղակները:  
Պետութեան վերակազմութիւնը այն ժամանակ միայն կատար-  
եալ կարող է լինել, երբ նրան ամբողջացնող տարբեր ազգերն  
ու ցեղերը հանդէս կը գան որպէս կազմ ու պատրաստ միա-

ւորներ։ Այն համոզմամբ թէ պետական վերակազմութեան դործում յաջող պայքար մղելու համար, անհրաժեշտ է միաւ համուռ ուժ, — այսօր ամեն մի ազգ ու ցեղ ձգտում է նախ ինքը ամփոփել իւր ոյժերը, բարոյական կամ քաղաքական կապ, միութիւն հաստատելով քաղաքական տարրեր ծրագրերով ու աշխարհայիշեցներով գործող դասակարգերի ու կուսակցութիւնների մէջ։

Ուստի մը պէտք է լինի հայ ազգի քաղաքականութիւնը, հարցը համազօր է այն հարցին, թէ որը պէտք է լինի այն քաղաքականութիւնը, որ մեր բոլոր դասակարգերին ու կուսակցութիւններին կարողանայ միացնել, այն դրօշը, որի տակ համախմբուէր ամբողջ հայութիւնը...

Գուցէ երկրագնդիս վրայ հայը միակ ազգն է, որ չունենալով միութեան կապ, զանազան կուսակցութիւններով, պարտիաներով ջլատուած լինելու շնորհիւ, դատապարտուել է սարը կութեան, եւ սա մի տեսակ ազգային յատկանիշ է, որով եթէ չասենք անհարին է, գոնէ կարող ենք ասել, որ դժուար է ստեղծել քաղաքական այնպիսի դաւանդք, որ կարողանար հայն միացնել։

Այսուամենայնիւ մի այդպիսի միութիւն անհրաժեշտ է եթէ մենք՝ իրաւ՝ ցանկանում ենք պահպանել մեր ազգային գոյութիւնը, որ բացարձակ վտանգի տակ է գտնւում։

Դառնանք բռն խնդրին։

Պ. Ենգիբարհանի ասելով, Կ. Պօլսի Հայոց Պատրիարք Ամեն. որբ. Օրմանեանը մի թղթով դիմել է Վեհ. Կաթողիկոսին, խնդրելով, որ ազդէ կովկասի հայ յեղափոխական կուսակցութիւնների վրայ, որպէսզի իրենց գործունէութիւնը Թիւրքիայում դադարեցնեն, որովհետև եթէ նորից վրդովմունք լինի, հայութիւնը ընածինջ կը լինի։

Այս դիմումին մենք նշանակութիւն ենք տալիս այն պատճառով, որ նա արել է Պօլսի Հայոց Պատրիարքը, որը ոչ միայն լոկ Թիւրքիայի հայոց կրօնական ներկայացուցիչն է հանդիսանում, այլև ազգալին ու քաղաքական։

Սակայն այս այսպէս լինելուց յետոյ, կարելի չէ պնդել որ Նորին Սրբազնութիւնը ամբողջ Թիւրքիալի հայերի բաղձանքի թարգմանն է հանդիսանում, որպէս կարելի չէ պնդել նաև այն բանի վրայ, թէ այդ միտքը յղացել է մենակ ինքը։ Որ Սրբ. Օրմանեանը զգուշութիւնը վախկուտութեան հասցրած մի Պատրիարք է, — այդ նա ցուց է տուել Պատրիարքական գահը բարձրանալու օրից, Բայց միևնոյն ժամանակ, որ նա

խելօթ հոգեսրական է, լաւ ծանօթ է թիւրքիայի քաղաքական մօտաւոր և հնուաւոր նպատակներին ու նրանց փօլիթիքային — այդ անվիճելի է: Յամենայն դէպս մեղ կասկածելի է թւռաւթէ սրբ. Օրմանեանը, մանաւանդ ներկայ պայմաններում, թոյլ կը տար իրեն նմանօրինակ դիմում անել, առանց երլդզի բըռ-նապետի պահանջման:

Ո՞ւմ յայտնի չէ, որ 94—96 չարաբաստիկ թուականներում արիւնաներկ երկրի զանազան անկիւններից անվերջ ուղերձներ էին մատուցանում կարմիր Սուլթանին, ուղերձներ այն հայերի կողմից, որոնք կոտորւում էին հենց նոյն սուլթանի հրամանով, բայց ստորագրում էին ուղերձների տակ, որովհետեւ այդ պահանջում էին կառավարութեան ագենտները մահուան սպառնալիքով:

Ասացինք, որ սրբ. Պատրիարքը խիստ զգոյշ է. այնուամենայնիւ նա որպէս բազմակողմանի զարգացման տէր մի հոգեւորական, անշուշտ պէտք է դիտենար, որ յեղափոխութիւնը արհեստական կերպով շինուող, սարքուող և յառաջ բերուող դրծողութիւն չէ, այլ նա պետութեան ներքին հիւանդութեան արտայայտութիւնն է և այդ հիւանդութեան անխուսափելի հետեւանքը: Այս ճշմարտութիւնը գիտցողը պիտի գիտնար նաև այն, որ յեղափոխական գործողութիւնների դադարեցնելը շատ վեր է ոչ միայն Կաթողիկոսի, այլ և իրեն Սուլթանի ոյժերից եթէ պետութիւնը կը մնայ հիւանդութ գրութեան մէջ, եթէ արմատախիլ չեն լինի այն պատճառները, որոնք ծնունդ են տուել յեղափոխութեան:

Կան հիւանդութիւններ, որոնք վերջանում են թոքերի բորբոքումով: Եեղափոխութիւնը հիւանդութեան թոքերի բորբոքումն է, կեանքի ու մահու պայքարը:

Եւ այս բանը մեզնից շատ լաւ գիտցող Պատրիարքը թոյլ չէր տայ իրեն մի այդպիսի դիմում անել առանց արտաքին ճնշման, մանաւանդ այժմ, երբ ինքը՝ Վեհ. Կաթողիկոսը նստած է յեղափոխութեան հրարուղիսի վրայ, երբ ամբողջ Ռուսաստանը նոյն կրակով է բռնկուած և Կովկասի հայք օրհասական կոիւ է մղում համիսլամական յեղափոխութեան դէմ, յանձին ոտքից գլուխ զինուած և կառավարութեան պաշտպանութիւնը վայելող մահմեղական խուժանի դէմ:

Բայց և այնպէս, պ. Ենդիբարեանի ասելով, սրբ. Օրմանեանի դիմումը արդէն կատարուած փաստ է և գլխաւորապէս այդ դիմումն է, որ յարուցել է ազգային քաղաքականութիւն ունենալու հարցը: — ահա մի հարց, որին պէտք է վերաբերուել

ամենայն լրջութեամբ, առանց կուսակցական շահերի և այլ նկատումների:

Փակագծի մէջ նկատենք, որ մինչև օրս, աննշան բացառութեամբ շատ կենսական նշանակութիւն ունեցող հարցեր են յարուցուել, քննուել ու լուծուել, առանց հայ ժողովրդի մասնակցութեան, մինչև անդամ առանց նրա գիտութեան, օրինակ. մի քանի անհատներ, իրենց գլխին զօր տալով, կազմել են և եկեղեցու ու ժողովրդի վզին փաթաթել «պօլօժենիէ» կոչուած օրէնքը, առանց ժողովրդի կամքը հարցնելու, առանց հայ եկեղեցու հիմնական օրէնքներն ի նկատի առնելու: Հենց անցեալներում մի խումբ պարոններ, փոխարքայի պալատում մշակում և բննում էին խաղաղութեան ծրագիրը, իհարկէ խօսելով ամբողջ կովկասի հայերի անունից, թէկ այդ հայերի ամենամեծ տոկոսը չը գիտէր իսկ թէ Փոխարքայի պալատում խորհրդակցութիւն է կատարում, իւր բաղդն է տնօրինուում: Այս ասելով, մենք չենք ուզում պատգամաւորների անձնական արժանիքը կամկածի տակ դնել, այլ ուզում ենք մի աւելորդ փաստով ևս ապացուցանել, որ տեղից վեր ենողը ազգի անունից է խօսում, նրա ճակատագրի հետ խաղում, այս ինչ ազգը տեղեկութիւն անդամ չունի:

Անցեալի սխաները չը կրկնենք, ներկայ հարցի յուծումը այս կամ այն շրջանի, դասակարգի և կուսակցութեան արտօնութիւն չը դարձնենք: Եթէ ազգային սեղանի վրայ դրուած է ազգի լինել թէ զինելու հարցը, ապա ուրեմն նրա ընսութիւնը, լուսաբանութիւնը պէտքէ զնել այնպիսի հողի վրայ, որ ժողովուրդը լայն գաղափար կազմի նրա մասին և այսպէս կամ այնպէս լուծման գործում անմիջական մասնակցութիւն ունենայ: Որպէսզի ժողովուրդը գիտակցօրէն վերաբերուի դէպի իւր ապագան, անհրաժեշտ է, որ նա ծանօթանայ անցեալի հետ և ըմբռնի ներկայ կացութեան կարևորութիւնը: Օրինակ մենք ասում ենք, որ պէտք է ունենանք ազգային քաղաքականութիւն, այսինքն մի նպատակ, որին հասնելով, ազգը հասած լինէր որոշ երշանկութեան, որոշ բաղդի, որոշ իրաւունքների և որին հասնելու ծանր աշխատութեան մասնակցէր ամեն մի հայ անհատ, անտրաւունջ և գիտակցօրէն տանելով ամեն տեսակի զրկանք ու տառապանքներ... Ուրեմն մարսելի լինելու չափ ժողովրդին պէտք է ծանօթացնենք.

Ա.) Թէ ինչպիսի քաղաքականութեան է հետևել հայը իւր անկախութեան և կիսանկախութեան շրջանում և որպիսի պայմանների մէջ:

Բ) Անկախութիւնը կորցնելուց յետոյ, հալը ունեցել է սեփական քաղաքականութիւն. եթէ ունեցել է, ինչ է եղել և ինչով է արտայայտել նաև:

Դ) Այժմ անհրաժեշտ է կամ կարո՞ղ ենք ունենալ քաղաքականութիւն՝ ընդհանրապէս, ազգային քաղաքականութիւն՝ մասնաւորապէս:

Եւ՝ Դ) Ո՞ր պէտք է լինի մեր ազգային քաղաքականութիւնը:

Այն դժոխային դրութիւնը, որին ենթակայ է մեր հայրենիքը, այն հալածանքները, բռնութիւնները, ջարդն ու թալանը, հուրն ու սուրը, որ անողոք փոթորկի նման ընկել են հայութեան զլիին, կարծես կրկնութիւնն է հին զարերի նոյնանձան պատուհամների Դա պատմական մի շարք դէպքերի կրկնութիւնն է, աննշան տարբերութեամբ. Մի ազգ, որ հազարաւոր տարիների ընթացքում պարբերաբար ենթարկւում է միևնոյն վտանգին, ասել է թէ այդ ազգը ունեցել է և ունի այնպիսի խոշոր թերութիւններ կամ առաւելութիւններ, որ ժամանակ առ ժամանակ իւր վրայ է հրաւիրում հարևան ազգերի նախանձը կամ բարկութիւնը. Այն հարցը թէ որն է եղել և է հայ ազգի թերութիւնները կամ առաւելութիւնը և թէ ինչն է արգելք դարձել մեզ քալքայող, ոչնչացնող վտանգի առաջն առնել—սրանը կազմում են մեր գործունէութեան բանալիները, որոնց վրայ կանգ առած և լուսաբանած պիտի լինէին մեր ազգային գործիչները և որոնք պիտի կազմէին գործիչների քաղաքականութեան հիմքը:

Ամեն մի շէնքնախ հիմքից են սկսում և հասնում տանիքին, և ոչ տանիքից սկսելով հասնում հիմքին: Եթէ մենք կամենում ենք թոթափել մեզանից ստրկութեան շղթան և ձեռք բերել մեր կորցրած ազգային, նոյնիսկ մարդկային իրաւունքները, նախ պէտքէ գիտենանք ստրկութեան շղթան մեր վիզն անցնելու. և ազգային իրաւունքներից զրկուելու պատճառները. Խսկ այդ գիտնալու համար մենք պէտք է ձեռք առնենք մեր պատմութիւնը, որպէս արել է Պ. Ենգիբարեանը:

Խսկ ինչ է ուսուցանում մեզ այդ պատմութիւնը.

Պէտքէ ասել որ մեր աւելի քան չորս հազար տարուայ պետութեան պատմութեան բեկորներն են հասել մեզ և այն՝ ոչ լիակատար ձեռվ, այնուամենանիւ պատմութեան արդ բեկորներն էլ ցոյց են տալիս, որ հայ ազգը թէև մէջ ընդ մէջ ունեցել է քաղաքական լիակատար անկախութիւն և հետեւ է յարձակողական նուամողական քաղաքականութեան, սակայն այդ տեսել է շատ կարճ ժամանակ և չի կարողացել արմատ

բոնել ոչ միայն հայ աղջի մէջ՝ ընդհանրապէս, այլ և իշխող թագաւորող շրջանի մէջ։ Սրա հակառակ չը նաւելով որ հային աշխատատող ազգերը միշտ յարձակողական դիրք են բռնիլ և շարունակ ձգտել են Հայաստանը նուաճել, — Հայը պահպանել է իր անկախ գոյութիւնը և պահպանել է շնորհիւ պաշտպանողական քաղաքականութեան։ Եւ ուրիշ կերպ էլ կարող չէր լինել. Հայաստանը իւր հրաշալի կլիմայով իւր բերքերի պէսպիսութեամբ և առատութեամբ և այլ բնական հարստութիւններով Հալի համար կատարեալ եղեմ էր և լիառատ կերպով գոհացնում էր նրան։ Նա երբէք աչք չի ունեցել ուրիշ հողի, ուրիշ երկիր վրայ, երբէք կարիք չի զգացել ուրիշ հող ու երկիր զրաւելու մէջ, որով և նրա մէջ բոյն չի գրել յարձակուելու, նուաճելու քաղաքականութիւնը։ Ընդհակառակը իւր սիրուն ու բնական հարստութիւններով առատ հայրենիքը օտարների դէմ պաշտպանելու քաղաքականութիւնից դուրս, նա հետեւել է շինարարական-արդիւնաբերական քաղաքականութեան. մշակել է երկիրը, ծաղկացրել, հարստացրել է, հիմնել շնու, պայծառ քաղաքներ ու գիւղեր, կառուցել է սիրուն պալատներ, կուտաներ ու վանք և հեկեղեցիներ և այլն ևային, որով միշտ շարժել է ոչ միայն մօտիկ դրացիների այլև հեռաւոր ազգերի նախանձը։

Հայկական իշխանութեան կիսանկախ շրջանի մասին բաւական ընդարձակ է խօսել պ. Ենգիբարեանը և շատ ծանրակղիս փաստերով ապացուցել է հայի յեղիղուկ քաղաքականութիւնը կամ այսպէս ասած, նրա զուրկ լինելը քաղաքական ամենահասարակ հոտառութիւնից և իւր պաշտպանողական քաղաքականութիւնը չի հասցըել այնպիսի պատկառելի ոյժի, որ կարողանար երկիրը ազատ պահել դրացիների հետզհետէ զարգացող ընչարացութեան ու արշաւանքներին։ Ուրիշ կերպ էլ կարելի չէ բացատրել ոխերիս Բիւզանդիայի գրկից նենգաւոր պարսկի և նենգաւոր պարսկի գրկից ոխերիմ Բիւզանդիոնի գիրը նետուելը։ Ինչպէս մի հեղուկ, որ յաճախ մի ամանից միւսը լցնելով սպառում է, այնպէս և փոխ ի փոխ մի թշնամու գրկից միւսի գիրը նետուելով հայը հետզհետէ հիւծուել, տկարացել է և նիւթական ու բարոյական ոյժերի աստիճանական սպառումի շնորհիւ, նա անկարող է գանուել պահպանել իւր քաղաքական գոյութիւնը և կորցըել է նրան։

Բայց հայ աղջի պատմութեան ուշագրաւ և վերին աստիճանի խրատական կէտը այն է, որ աղջի ճակատագրի հետ խաղացել ու տանուլ են տուել իշխանութեան գլուխ անցած անհատները միայն, որի մէջ աղջը ոչ մի յանցանք չունի։ Այդ

ընտրեալները՝ երբեմն իրերի դրութեան սխալ հասկացողութիւնից, շատ անգամ իրենց անձնական շահի ու փառքի համար, բայց աւելի յաճախ օտարների օգնութեամբ երկրի իշխանութիւնը միմեանց ձեռփես յափշտակելու ցանկութեամբ, —արել են ինչ որ իրենց ինքը ինչ է, առանց հաշուի առնելու հայրենիքի ու ազգի շահը, նրանց ապագան և գրաստի նման ժողովրդին տարել, կապել են ում մսութքում էլ ցանկացել են:

Մեզ միշտ տարօրինակ է թուացել այն, որ թէ հին մատենագիրները, նոյնպէս և ժամանակակից ազգազրերը, անհատների յանցանքն ու սիալանքները միշտ փաթաթել են ազգերի վզին և սրանց մէջ են որոնել ազգերի անյաջողութիւնը, անկումը, կորուստը, որպէս և այն, որ աշխարհակալական յաջողութիւնները վերագրել են նրանց քաջարի ոգուն և պատերազմասիրութեան: Քաջութիւնը, անվեհերութիւնն, իրաւ՝ գովելի յատկութիւն է, բայց անհաւատալի է թւում մեզ այն թէ գտնուի մի ազգ (չը հաշուելով աւազակարարու վայրենի ցեղերին) որ պատերազմ սիրէ: Ուրիշ բան է լինել բազ և պատերազմել գիտնալու ուրիշ բան է պատերազմ սիրել: Մենք գիտենք, որ ոռու ժողովուրդը ճապոնացիների չափ քաջ է և նրանցից աւելի թրծուած. սակայն երբ քշեցին նրան ճապոնացոց դէմ, նա չուզեց պատերազմել, որովհետև այդ պատերազմը ժողովրդական չէր: Եւ հետեւանքն այն եղաւ, որ քթոթը մուրճն առած, նսաեց փղի վզին ու դուրս բշեց իրեն չը պատկանող երկրի սահմաններից:

Ուրեմն հակառակ Հայաստանի աշխարհագրական դիրքին, ընական ամրութիւնների բացակայութեան և զրջապատող բարբարոս, օտարի հաշուով ապրելու տրամադիր ցեղերի հետզհետէ ուժեղանալուն, այնուամենայնիւ կասկածելի է թէ հայը իսպատ կը կորցնէր իւր քաղաքական անկախութիւնը և երկիրն ընդմիշտ կընկնէր օտարների լծի տակ, եթէ ազգի ու հայրենիքի բաղդը անօրինելու գործում լայն մասնակցութիւն ունեցած լինէր ինքը՝ հայ ժողովուրդը:

Մեր պատմութիւնը լիքն է բազմաթիւ ապացոյցներով, որ հայը թէ իւր անկախութեան և թէ կիսանկախութեան զրջանում չի ունեցել զուտ ազգային քաղաքականութիւն, այլ երկիրը դեկավարուել է ընտրեալ անհատների քմածին քաղաքականութեամբ, որը նպաստել է թէ պետութեան և թէ ազգի շուտափոյթ անկման:

Որպէս Թիւրքիայի, նոյնպէս և Ռուսաստանի հայերի

մէջ բազմաթիւ են եղել և նոյն իսկ այժմ կան պնդողներ, թէ այն ագգերը, որոնք վաղուց կորցրած լինելով իրենց քաղաքական անկախութիւնը, ընկել են անհամեստ ուժեղ պետութիւնների լծի տակ,—նրանք տիրապետող կառավարութեան քաղաքականութիւնից դուրս ուրիշ ինքնուրոյն քաղաքականութիւն ունենալ չեն կարող... Եւ եթէ սրանց պատճառաւ բանութիւնները հալած իւղի տեղ ընդունելու լինենք, պիտի ենթադրենք, որ հայը իւր քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ, սեփական քաղաքականութիւն չի ունեցել:

Եթէ խօսքը՝ զիցուք, Ամերիկայի հայերի մասին լինէր, ուր ազգային, կրօնական և այլ խնդիրներ չը կան, ուր ամենը ըն էլ երկրի հարազատ քաղաքացիներ են համարւում, հաւասար իրաւունքներով,—մասամբ միայն կարելի էր իրաւունք տալ: Սակայն երբ հարցը վերաբերում է Թիւրքիային և Ռուսաստանին, ուր ույան ու հպատակը համարւում են երկրի խորթ զաւակները և՝ զիցուք, մի կուրօպատկինի աչքում գիշեր ու ցերեկ օղուն երկրպագող իվանը կավ մի Բահրի փաշայի աչքում ձրիակեր, աչքը աւազակութեան մէջ բացած Հասոն գերազաս են կարապետից ու Մնացականից և ուր վերջապէս ազգային ու կրօնական խնդիրները կազմում են պետական քաղաքականութեան հիմքը ու օտարազգի, օտար կրօն դաւանողները բացարձակ կերպով հալածում են—այն այսպիսի պետութիւնների վերաբերմամբ վերոյիշեալ կարծիքը միանգամայն անհեթեթ է:

Բարեբազոտաբար հայ ազգի ստուար մեծամասնութիւնը շատ լաւ է հասկացել այդ կարծիքի անհեթեթութիւնը. Հայաստանը քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ էլ, երբ այլևս չը կալին ազգի շահագործող անհատներ, — այլ չը հաշուելով Ղարաբաղի մելինքներին, — կար օտար լծի տակ հեծող հայ ուայաց միայն—այդ ուայաց հայը ունեցել է նոյնպէս իւր սեփական քաղաքականութիւնը: Եթէ նա չունենար ազգային քաղաքականութիւն, եթէ ընդունած և իւրացրած լինէր տիրապետող կառավարութեան քաղաքականութիւնը, այնքան դժնդակ, այնքան դժոխային պայմանների մէջ, որպէս հայ, նա չը պիտի կարողանար գոյութիւն ունենալ. այն ինչ ոչ միայն նա պահպանել է իւր ազգային գոյութիւնը, այլև պահպանել է կրօնը, եկեղեցին, լեզուն, ազգային աւանդութիւններն ու սովորութիւնները: Այս քաղաքականութիւնն էլ թէև մի առանձին տեսսակի պաշտպանողական քաղաքականութիւն է, այնուամենայնիւ քաղաքականութիւն է և այն ամենագործնական քաղաքա-

կանութիւնը այն ազգերի համար, որոնք ուրիշ որևէ է շոշափելի, իրական յնակէտ չունին: Աւելին կասենք—սա զուտ տղային, ինքնարուղիս քաղաքականութիւն է: Արեան ու արհաւակրեթի բռնութեան ու հալածանքի բովում տապակուող հայը, ասպիտական անձնուրուցութեամբ, դառնութեան բաժակը քամելով. ունեցել է մի սրբազն նպատակ միայն, այն է—հայրիստոնեայ մնալու և հայ-քրիստոնեայ թաղուելու այն հոգում. որ ժառանգել է իւր հօրից և որը կազմում է հայի հայրենիքը ու նրա գերեզմանը և միենոյնը ներշնչելու իւր զաւակներին ու թռոներին:

Եւ այս ինքնարուղիս քաղաքականութիւնը, որպէս յզացումն ստրկական լծի տակ հեծող հայ հոգեկան իմացականութեան, կնքուած ու նուիրագործուած ազգասիրութեան ու հայրենասիրութեան մաքուր զգացմունքով, փոխարինել է լաւագոյն քաղաքականութիւնից ամենալաւին:

Պետքու մեծի օրերում հայի մէջ զարթնեց ազատութեան ազօտ յոյսը: Ռուսաստանը դէպի Եւրոպա յառաջ խաղալու ճանապարհ ու ոյժ չունենալով, նա իւր ուշադրութիւնը դարձրեց դէպի Ասիա, դէպի Պարսկաստան ու Տաճկաստան: Եւ նա հանդէս եկաւ որպէս պաշտպան մահմեդական լծի տակ հեծող քրիստոնեաների: Իսկ հայը մէկն էր այն քրիստոնեայ ազգերից, որ աւելի շատ և աւելի երկար էր տառապել: Ինչժմ ուշ բեմն նա անտարբեր պիտի մնար. Ինչու յոյս չը պիտի դնէք Ռուսաստանի վրայ, որն իրեն ազատութիւն էր խոստանում, իւր զուտ պաշտպանողական քաղաքականութեան միացնելով և Ռուսաստանի քաղաքականութիւնը:

Պատմական գոկումենտների վրայ հիմնուելով կարելի է ասել, որ հայը օրինաւոր պատճառներ է ունեցել յոյսը Ռուսաստանի վրայ զնելու, եթէ Եղիշէն սխալում է, կարծելով թէ Թէսուրոս կայսեր մահը խանգարեց Յունաստանի հայերին օգնելու գործին, գոնէ մենք սխալուած չենք լինի, եթէ ասենք որ Եկատերինէ կայսրունու մահը խանգարեց Արարատեան երկրի ինքնավարութեան գործին: Ուրեմն տասներորդ դարի հայերի քաղաքականութիւնը հինգերորդ դարի հայերի քաղաքականութեան հետ ոչ մի նմանութիւն չունի: Միակ երեսյթը, որ միշտ և բոլոր զարաշրջաններում աչքի է զարկել իւր զարմանալի միանմանութեամբ,—այն է, որ միշտ հայ ժողովուրդը քաղաքական աւելի մեծ հոտառութիւն է ցոյց առւել, քան իշխող դասակարգը: Նոյնիսկ հինգերորդ դարում, ժողովուրդը հակառակ նախարարների, մարզպանների ու հոգմարականների

քաղաքականութեան, պատուաւոր մահը, օտարի լծից գերադաս էր համարում, որովհետև նա աւելի լաւ էր ճանաշում կրակառաշում պարսկին և քրիստոնեայ յոյնին, քան իշխանները: Այն ժամանակ հրբ Տղմուտի ափին կանգնած էր պարսկական ահեղ քանակը, հայ ժողովորդը հեշտութիւնը կարող էր հեռացնել իրենից փորձութեան բաժակը. բաւական էր, եթէ Յազկերատի առջև չըքելով ասէր. «Ճենք ընդունում ենք ձեր պայմանները, եկէք, իշխացէք Հայաստանի վրայ, քանդիցէք եկեղեցիները և մենք կրակ կը պաշտենք, հրաժարուելով այն բոլորից, ինչ որ ձեզ հաճելի չէ...»: Զէ որ շատ ու քիչ նման ստոր պայմաններով էր, որ ազգին մէկի գրկից միւսի գիրկն էին նետում: Բայց հայ ժողովրդին չը սարսափեցրեց Պարսից ահեղ բանակը, որովհետև երբէք նրան սարսափելի չի եղել մահը, այլ սարսափելի է եղել հայրենիքի ու եկեղեցու ստորացումը, նրանց ուրանալը:

*Մահ կամ ազատութիւն—սա է եղել և է ժողովրդի քաղաքականութեան հաւատամբը:*

Իշխանութիւն եւ փառք—սա է եղել և է երկիրը կառավարողների քաղաքական դաւանանը:

*Առաջինը միշտ իւր կեանքն էլ զոհել է հայրենիքի փառքին ու աղատութեան, իսկ երկրորդը իւր անձնական փառքին ու շահին զոհել է հայրենիքը:*

Հայը, ծեր թէ երիտասարդ, այր թէ կին, հարուստ թէ աղքատ, աշխարհական թէ հոգմորական, նպաստելով Ռուսաց պատերազմներին Տաճկաստանի և Պարսկաստանի դէմ, նպաստում էին իրենց վզից թոթափելուն այն անարգ ու ծանր շղթալի, որ կը էին այնքան երկար տարիների: Իրաւ է՝ որ Հայաստանի ինքնավարութեան յոյսը արդէն համարում էր կասկածելի, այնուամենայնիւ տանելի կեանքի լոյսն էլ բաւական էր, որ քաջալերէք հային:

Եւ նա ինսգերորդ դարու հայի նման չէր սխալում և պէտք է ասել, որ չը սխալուեց: Թէև այդ պատմական դէպքից սի կէս դար չանցած Ռուսաստանի քաղաքականութիւնը փոխուեց և յանուն քրիստոնեաների աղատութեան թիւրքիայի դէմ կոիւ մզող Ռուսաստանը վերջը ինքն սկսեց հալածել հային ու հայութիւնը աւելի անողոք կերպով, քան նոյնիսկ թիւրքիան, սակայն ինչպէս վերն ասացինք, այդ պատահեց մօտ կէս դար յետոյ: Քան և ութ թուականի հայը չէր կարող երեակայել թէ Ռուսաստանը կը դիմէ ինքնասպան քաղաքականութեան, թէ այդ երկիրը մի օր կը ներկուի իւր հարազատ ժողովրդի արիւնով:

Ուրեմն հայը իւր ստրկական ամենադառն շրջանում նոյն-իսկ ունեցել է իւր սեփական ազգային քաղաքականութիւնը:

Առանց քաղաքական իդէալների ապրել կարելի չէ, բայց չունենալ ազգային քաղաքականութիւն, կը նշանակի զուրկ լինել ազգային գիտակցութիւնից ու ազգային իդէալական նպատակներից: Եւ զուրկ լինելով սրանցից, միևնոյն է թէ չունենալ ազգային դէմք կամ որպէս ուրոյն ազգ գոյութիւն ունենալուց դադարել: Մենք տեսնում ենք որ ազգայնութեան գաղափարը ամուր խարսխի տեղ է ծառայում մեզնից շատ աւելի քաղաքակիրթ, կազմակերպուած ու հզօր ազգերի համար: Ուրեմն մենք աւելի ամուր պէտք է կպչենք այդ խարսխին, որպէս զի գոյութիւն կոռուի փոթորիկը մեզ չը տանի ու չխեղդի մարդկութեան ովկիանոսում: Հայաստանի վրայից եկել անցել են պարսկական, արաբական, թաթարական և ալ խաֆամուժների մէկը միւսից ահեղ փոթորիկները, բայց հայը ազգային քաղաքականութեան խարսխից ամուր կառչած, պահպանել է իւր գոյութիւնը մինչև օրս:

Քանի որ որպէս ուրոյն ազգ ապրելու և մեր գոյութիւնը պահպանելու ցանկութիւնը այնքան բուռն է մեզանում, որ մեր արիւնն էլ չենք խնայում, ուրեմն մեր գոյութիւնը կամ գոյութիւն կորեւ պէտք է ունենայ նաև որոշ նպատակ և այդ նպատակը պիտի կազմէ մեր ազգային քաղաքականութեան հաւատամքը:

Նպատակի որոշումը մենք աւելի ծանրակշիռ ենք համարում նրա համար, որ վերջին ժամանակներս քաղաքական մեքնայի անիւր սկսեց դասնալ բոլորովին տարրեր ուղղութեամբ ու թափով և բռնութեան լծի տակ հեծող ազգերի ու դասակարգերի տրամադրութեան մնտիկը սկսեց այնպիսի արագ ելեկցներ անել, որ ոչ միայն մեզ շրջապատող պայմանները ոչ մի նմանութիւն չունին մեր պատճերին շրջապատող պայմանների հետ, ալ և երեկը այսօրուան չի նմանում, իսկ ոչ ոք չի կարող ասել, թէ այսօրը կը նմանի վաղուան:

Մի խօսքով, եթէ մեր պապերը հարենի հողին կպած, իրենց ազգային լեզուն, կրօնը, եկեղեցին և այլն պահպանելով պահպանած են եղել իրենց ազգային գոյութիւնը, միևնոյն բաներով այսուհետև էլ կարելի չէ գոյութիւն պահպանել: Մի ժամանակ հայրենիքի ու ազգի սէրը, կրօնի ու եկեղեցու սէրը թէն կազմել են այն անառիկ ամրոցները, որոնց պատերի տակ ջախջախուել են վայրենի ցեղերից բաղկացած հեղեղի ահեղ ալիքները, իսկ այսօր նման ամրոցներն այլ ևս անառիկ չեն:

Մեզ հարկաւոր են աւելի ամուր ամրոցներ, որոնք դիմանային քաղաքական ժամանակակից զէնքերին։ Պաշտպանողական քաղաքականութեամբ, որ կրաւորական քաղաքականութիւն է, մենք ոչ միայն չենք կարող ժամանակի հոսանքի հետ յառաջ գնալ, այլև նրանով չենք կարող մեր դիրքերում կանգուն մնալ։ Մեր ազգային քաղաքականութեան նպատակը պէտք է լինի— կատարեալ ապահովութիւն ազգային գոյութեան հայրենի հողի վրայ և լայն ասպարէզ կուլտուրական յառաջադիմութեան, որոնցով մենք կարողանայինք երևան հանել և անարգել գործածութեան մէջ դնել մեր ազգային ընդունակութիւնները։

Վերջապէս քաղաքական հանգամանքներն այնպէս են դասաւորուած, որ ոչ միայն դասակարգային, այլև ցեղային իրաւունքները անհրաժեշտօրէն պիտի վերափոխուեն և այդ հսկայական յեղացրջման դէպքում կրաւորական քաղաքականութիւնը չի կարող այլև մեզ պաշտպանել վերջնական կորուստից, ընդհակառակը թերևս մենք աւելի շուտ խորտակուենք հենց այդ խախուտ շնչքի աւերակների տակ։ Անհրաժեշտ է որ պատրաստ գոնուենք, ըստ պահանջման հարկին, ներգործական քաղաքականութեան անցնելու։

Սակայն պ. Ենգիբարեանի հետ շատ շատերը, նայելով իրենց շուրջը, բննելով հանգամանքների բարգութիւնը, ակամայ գալիս են այն եղակացութեան, որ քաղաքական այդքան ամուր շէնք կառուցանելու համար թէ հողն է խարխու, թէ նիւթը անյարմար և թէ միջոցներն անբաւարար։ Գոնէ պ. Ենգիբարեանը այդ պակասութիւնների վրայ շեշտում է առանձնապէս և պնդում է, որ առանց քարեկամի, դաշնակցի հայը գոյութեան պայքարից անվտանգ դուրս գալ չը պիտի կարողանայ։

Հնթերցողն արգէն տեսնում է, որ խօսքը ներկայի մասին չէ, այլ մօտաւոր կամ հեռաւոր ապագայի մասին, նայելով հանգամանքների զարգացողութեան աստիճանին։ Ուստի թոյլ եմ տալիս ասելու, որ հայի նկատմամբ ես այդքան էլ յոռետես չեմ, այն հայի, որ անվտանգ անցել է թշուառութեան ու տառապանքի բովի բոլոր աստիճաններից։ Ճիշտ է, որ քաղաքականապէս տիրապետողի, գերիշխողի գեր կատարելու համար շատ անհրաժեշտ միջոցներից զուրկ լինելուց յետոյ, թուով էլ շատ քիչ ենք ոչ միայն ամբողջ Հայաստանում, այլև չը կան միմնանց կից երկու նահանգներ, ուր քնակչու-


թեան 60% կազմէինք. բայց քանի որ մենք նպատակ չունենք վերականգնելու այն, ինչ որ ուրիշները կործանել են ուղղում, ոչ էլ միտք ունենք բռնի ոյժով ազգեր նուաճելու և մեզ հպատակիցնելու, ուրեմն մեր թուական գերազանցութիւնը անհրաժեշտ էլ չէ:

Քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ, ինչպէս վերն էլ ասացինք, հայի նպատակն է եղել ազգի գոյութեան պահպանումը, բառի նեղ հասկացողութեամբ: Այժմ էլ մեր ազգային գոյութիւնը պահպանելուց զատ ուրիշ ձգտում չունենք, միան թէ այդ բառի լայն մաքով: Եթէ հայ ազգը իւր գոյութիւնը լայնօրէն պահպանելուց յետոյ կոչուած է նաև նուաճումներ անելու, իշխելու, տիրապետելու, — նա այդ պէտք է անի քաղաքակրթութեամբ և քացառապէս կուլտուրական զէնքերով: Խսկ այս դէպքում հարկ չը կայ, որ երկու կամ աւելի նահանգներում նա բնակչութեան այս կամ այն տոկոսը կազմի, այլ անհրաժեշտ է, որ նա քաղաքակրթութեամբ բարձր կանգնած լինի երկրի բնակչութեան միւս տարրերի մակերևոյթից:

Մեզ կարող են պատասխանել, որ քաղաքակրթուելու որոշ ազատազրական սկզբունքների հասնելու իրաւոնքն էլ պէտք է ձեռք բերել ոյժով, երբ գարձեալ անհրաժեշտ թուական առաւելութիւն, ոյժերի գերազանցութիւն և կարող են օրինակ բերել այն, որ հենց մեր կողքին, ամբողջ Ռուսաստանում կրթական հաստատութիւններն իրենց ըոլոր ճիշդերով դրուած են կրիայի քայլերով միայն յառաջ գնալու հազար ու մի արգելքների ու խոչնդունների...

Այդ իհարկէ ճիշտ է, հենց այդ մտքով էլ փակուեցին մեր այնքան դպրոցները, բարեկործական ընկերութիւնները և այլն, որոնք կոչուած էին ծառայելու մեր ժողովրդի քաղաքակրթութեան գործին: Սակայն ճիշտ է և այն, որ կոպիտ ոյժի թագաւորութիւնը յաւիտենական չէ և այդ թագաւորութեան ջղերն այսօր արնքան սաստիկ են լարուած, որ դրանից այն կողմն անցնելու տեղ չը կայ: Զը գիտենք բնութեան մը օրէնքով կարող են ապացուցանել թէ մի այդ աստիճանի լարուած դրութիւն կարող է շատ երկար տևել: Ան ինչ ամեն ոք գիտի Հռովմէչական և Բիւզանդական գոռող կայսրութեանց նման պայմանների մէջ անկումը, որոնց աւերակների տակ թաղուեց բռնակալութիւնը այն ժամանակ, երբ միւս կողմից գլուխ բարձրացրեց ազատութիւնը:

Այդ բոլորից յետոյ, չի կարելի ուրանալ, որ հայի գրու-



թիւնը թէ Թիւրբիայում և թէ Ռուսաստանում աւելի կրի-  
տիքական է, բան եղել է երբ և իցէ: Մենք դտնուում ենք  
երկու կրակի մէջ, մէկը միւսից ահեղ, մէկը միւսից անողոք  
և չը կայ մէկը, որի վրայ յոյս զնէինք:

Բայց մէ ստեղծեց այդ դժոխալին գրութիւնը:

Մենք դիտենք, որ Օսմանցիք Հայաստանը գրաւելուց  
յետոյ, հայը մի առաւելութիւն սիահն ունեցաւ, այն է այդ  
երկիրը դադարեց ձեռքից ձեռք անցնելով ընդարձակ սրածու-  
թիւնների, աւարառութիւնների և հրդեհների թատերաբեմ  
դառնալ: Հայը կրեց Օսմանեան ծանր լուծը: Բայց որքան էլ  
ծանր, ստրկական լինէր այդ լուծը, այնու ամենայնիւ հայի  
ազգային գոյութեան վտանգ չէր սպառնում և դարերի փորձն  
էլ ցոյց տուեց, որ վտանգ սպառնալ էլ կարող չէր: Ահա թէ  
ինչու.

Օսմանցիք բացառապէս սրի ոյժով նուաճեցին այնպիսի  
երկիրներ, ուր բնիկ ցեղերը, հայերը, յոյները, Բալկանեան  
թերակղզու բնակիչները իրենցից շատ աւելի բաղաքակիրթ,  
անտեսագէտ և կուլտուրական էին: Ալսպիսի ցեղերի փերջնա-  
կանապէս նուաճելու համար, անհրաժեշտ էր, որ բացի սրի  
գերազանցութիւնից, հանդէս զային և իրենց կուլտուրական  
գերազանցութեամբ, իրենց անտեսագիտութեամբ, բաղաքա-  
կրթութեամբ, երբ իսկապէս մեր ազգային գոյութեան կարող  
չը վտանգ սպառնալ: Բարեբազտաբար բացի սրից օսմանցիք  
ոչինչ չունէին և հենց այդ սրին կրթնած էլ պահպանել են  
իրենց տիրապետութիւնը գրաւած մի քանի ցեղերի վրայ: Արդ  
ցեղերից մէկը հայն է, որը գտնուում է բացաւիկ պայման-  
ների մէջ: Հայերին կլց և շատ տեղ էլ խառը ապրում էր  
քիւրդ տարրը օսմանցիներից ոչ պակաս ձրիակեր, նրանց չափ  
անտեսութիւնից ու քաղաքակրթութիւնից զուրկ, որը միւնուն  
ժամանակ չէր կամենում Թիւրբիայի լուծը կրել, ինչպէս այդ  
արեց հայը, ուրիշ ելք չունենալով: Խոկ այն օրից, երբ Ռուս-  
աստանը Եւրոպայի կողմից Թիւրբիայն հարուածելը դա-  
դարեցրեց և արդ հարուածը ուղղեց Ասիայի-Կովկասի կողմից,  
հայ տարրը կասկածելի դարձաւ, լոկ ոռուներին հաւատակից-  
քրիստոնեայ լինելու պատճառով, մանաւանդ որ յօգուտ հայի  
մի քանի միջամտութեան փորձեր էլ եղել էին: Եւ որպէս զի  
հայը անվտանգ դառնայ, Թիւրբիան Հայաստանը լցրեց քիւրդ-  
երից ոչ պակաս անհանգիստ, աւազակաբարոյ և ձրիակեր  
տարրերով, այնպէս որ կարճ ժամանակուայ ընթացքում հայը  
իւր հայրենիքում շրջապատուեց մահմեղական բաշիքօզուկներով:

իրաւ է որ հայի աշխատանքը, նրա վաստակի արդիմքը ամբողջովին կուլ էին գնում այդ բաշիրօզուկներից, որ պատահում էին բացարձակ կողապուտներ, հարածանք և սպանութիւններ, սակայն դրանք միշտ կրում էին մասնաւոր բնաւորութիւն, որովհետև կառավարութիւնը հային բնաջինջ անելու կողմնակից չէր:

Եթէ ընդունենք, որ Թիւրքիայի պետական գործիչների մէջ էլ միշտ գտնուել են խելացի քաղաքագէտներ և երկրի դրութիւնը իրենց հարազատ գոյնով ըմբռնող անձինք, ապա ուրիմ նրանք պիտի գիտնային, որ հայը ոսկի ձու ածող մի հաւ. է, և նրա դրած ոսկի հաւկիթը ոչ միայն պետութեան գանձարանն է լցնում, այլև գոհացնում, ապրեցնում է քիւրդերին, լազերին, չերքեղներին և այլ մահմեդական բաշիրօզուկներին, որոնք ընդունակ չեն իրենց ձեռքի աշխատանշով ապրելու եւ այս ճշմարտութիւնը ըմբռնող պետական գոծիչները պիտի գիտնալին և այն, որ եթէ սպասեն կամ թոյլ տան սպանելու այդ ոսկի հաւկիթ գնող հաւին—հային, նրա աշխատանքով կերակրուող միլիօնաւոր բաշիրօզուկները քաղցած մնալով, որպէս գայլեր, միմնանց պիտի բգկաէին, ատկնուվրայ անելով ոչ միայն երկիրը այլև Օսմանեան պետութիւնը: Այդպիսի մի վտանգ Օսմանեան կառավարութեան համար անխուսափելի կը լինէր և անխուսափելի է այսուհետև էլ այն չափով, որ չափով այդ երկիրը դատարկուի հայ տարրից: Մահմեդականների թիւը Հայաստանում աւելացնելով հային անվտանգ դարձնելուց յետոյ, որպէս զի ազատ մնայ և մահմեդականների կողմէց սպանացող աւելի մեծ վտանգից, Օսմանեան կառավարութիւնը հայի գոյութեան կողմնակից պէտք է լինէր: Եւ իսկապէս այդ կառավարութիւնը իւր ժամանակին ցոյց է տուել իւր անսահման վատահութիւնը դէպի հայը, կոչելով նրան պետական բարձր պաշտօնների և մինչեւ անգամ շնորհելով նրան սահմանադրութիւն, որով հայերը հնարաւորութիւն ունեցան երկրի զանազան անկիններում դպրոցներ բանալով տարածել նրանց մէջ ուսում, կրթութիւն, մայրենի լեզու և այլ գիտութիւններ:

Բայց անցեալ դարու թան և ութ թուկն մեր յոյսերի մէջ չարաչար խաբուած լինելուց յետոյ, եօթանասուն և ութին էլ խաչ ու խաչվառվ դիմաւորելով մեզ խարողներին, կրկնեցինք արդէն մի անգամ գործած մեր սխալը: Իրաւ է որ վերջին անգամ մեզ սխալեցնողը յանում քրիստոնեաների

աղատութեան յայտարարուած պատերազմն էր, բայց երբ Սան-Ստեֆանօի դաշնագրի 16 տօղուածով Ռուսաստանը պահանջեց, որ իւր զօրքը մնայ Թիւրքաց Հայաստանում մինչև բարենորոգումների մտցնելը, մենք եթէ շատ ու քիչ քաղաքական հոտառութիւն ունենայինք, պէտք է զգուշանայինք հետագայ նորանոր բայլերից: Բայց չզգուշացանք և մեր դատը պաշտպանելու համար վաղեցինք մինչև Եերլին: Եւ սրանով մենք ինքներս մեզ զրինք երկու կրակի մէջ, այն է մեր դէմ թշնամացրինք Թիւրքիային, նպաստելով այն պետութեան ուժեղանալուն, որից գալիք չարիքները վաղուց գուշակուած էր Եւրոպական յայտնի քաղաքադէտների կողմից: Մենք մի բոպէ անգամ չուղեցինք մտածել որ մեզ համար աւելի ձեռնոտու է Թիւրքիայի տիրապետութիւնը, որ քայլայուելու վիճակի մէջ է, քան Ռուսաստանի, որ ձգուում է Երկրագումնդը կանել: Մենք ոչ միայն այդ մասին չուղեցինք մտածել այն ժամանակ, երբ գեռ Կովկասի հայլ համեմատարար խաղաղ էր ապրում, այլև այն ժամանակ, երբ արդէն մեր զպրոցները խլուել էին, աքսորավիլերը լցուել հոգևորական ու աշխարհական հայ աքսորիալներով և Սուլը հջմիածնի ու նրա գահակալի դէմ բացարձակ դաւելը էին սարգւում: Այս բոլորից յետոյ մեր շահերը պահանջում էին, որ մենք ընտրէինք երկու չարիքի փոքրագոյնը հնարաւոր եղածի չափ ուղղելով արդէն մեր գործած սիսակները մեր հաւատարմութեան անկեղծ զգացումով կրկին վերականգնէինք Թիւրքիայի հաւատքն ու վստահութիւնը, որքան այդ հնարաւոր էր: Զէ որ գեռ այն ժամանակ էլ Թիւրքիան հետեւում էր Հայաստանը մահմեղականներով լցնելու և հայերին աւելի ևս անվտանգ դարձնելու ծրագրին և չէր մտածում բնաջինջ անել նրանց, որպէս արեց 94 թ. Սասունի ապստամբութիւնից յետոյ:

Պէտք է ասել որ Ռուսաստանը հայերի նկատմամբ իւր քաղաքական քարտերը բանալուց յետոյ, Կովկասի հայերի ամենամեծ մասը հակառակ էր ամեն մի թշնամական գործողութեան Թիւրքիայի դէմ, արդէն համոզուած լինելով, որ Ռուսաստանը աւելի քան վտանգաւոր է: Բայց հակառակ անողոք իրականութեան, մի գեղեցիկ օր, Խենթ Ռաֆֆին,—ախ ներուզութիւն,—Ռաֆֆու Խենթը Լալայի գերեզմանի վրայ գեղեցիկ երազ տեսաւ, այնքան գեղեցիկ, այնքան հրապուրիչ, որ ոչ միայն նրանով խարուեց ինքը՝ երազը թիւողը և Հայաստան դրկեց իւր Աւօին, Կարօին, Սաքօին, Ասլանին և այլոց, այլ և այդ ուսուպիական ծրագրով զինուած վարդուն երիտա-

սարդների մի խումբ, ի հարկէ, բաղկացած ոչ երազական, այլ իրական հայրենասէրներից, մտաւ Հայաստան Խէնթի երազը իրականացնելու Եւ այդ դժուար չեղաւ (թէև հակառակ մտքով, որի մասին կը խօսենք իւր տեղում) որովհետև ժամանակի ոգին և տիրող ծանր պայմանները արդէն յեղափոխութեան կայծը ձգել էին Թիւրբաց Հայաստանի հայրենասէր երիտասարդութեան մէջ:

Ահա այդ օրից իրերի գրութիւնը Թիւրբաց Հայաստանում բարդուեցան. կառավարութիւնը բաշիրօզուկներին աւելի ազատութիւն տալով, այս վերջնաներս սկսեցին աւելի մեծ չարիքներ գործել, իսկ օր աւուր սաստկացող չարիքները սաստկացրին և յեղափոխութիւնը հայերի մէջ:

Կրկնում ենք որ այս բոլորը տեղի ունեցան աւելի ուշ, քան Ռուսաստանի քաղաքական քարտերի բացուելը հայութեան նկատմամբ: Բացի այս, որ ոռւս իշխանութիւնը բացարձակ հալածանք էր սկսել հայերի դէմ Կովկասում, նա ասել էր և իւր վճռական խօսքը նաև Թիւրքիոյ հայերի մասին, յայտարարելով, որ Հայաստանը իրեն պէտք է առանց հայերի:

Այդ թուականներում յեղափոխութեան գործը արդէն կազմակերպուած էր և նրան ղեկավարում էր երկու կուսակցութիւնն. — Հնչակեան, որ աւելի ուժեղ էր և Դաշնակցութիւնը...

Վերջը խօսելով այն մասին, որ հայի գրութիւնն այժմ աւելի քան կրիտիքական է՝ հարցրինք, ով ստեղծեց այդ դժոխային գրութիւնը: Եւ որովհետև այդ հարցից յետոյ, հնարատը եղածի չափով, համառօտակի խօսեցինք իրերի գրութեան աստիճանաբար փոփոխուելու և այդ փոխախութիւնը յառաջ քերող պատճառների և քաղաքական հանգամանքների մասին, ուստի ընթերցողին եմ թողնում պատասխանելու այն հարցին թէ, ով ստեղծեց և ում սխալ քաղաքականութեան հետևանք էր այդ դժոխային գրութիւնը:

Եւ ներկայ ծանր գրութեան դէմ կոռուելու համար, մեր կարծիքով մենք ուրիշ քաղաքականութեան կամ որոյ ծրագրուած քաղաքականութեան հետևել չենք կարող, բացի այն քաղաքականութիւնից, որ տիրապետող գրութիւնը կը թելադրէ մեզ: Ո՞վ կարող է ճիշտ գուշակել, թէ ի՞նչ կը պատահի մի օրից, մի շաբթից կամ մի ամսից յետոյ: Ո՞վ կարող է անսխալ ասել թէ վաղը մը կողմից պիտի գայ վտանգը, Ռուսաստանից, Թիւրքիայից, թէ մի ուրիշ կողմից. կամ ի՞նչ գիտենք թէ այսօր մեզ հաշտութիւն առաջարկող և հայ մահմեղական եղբայրութեան անունից ճառող մահմեղական պատ-

գամաւորները վաղը Օսմանեան բանակի հաւատարիմ ուղեցոյցերը դառնալով. չըն վճռի նախ մեղ բնաջինջ անել, իսկ Ռուսաստանը զգալով իւր սխալը չի վերադառնայ Եկատարինէ Ա խելօթ կայսրունու քաղաքականութեան, Ռուսաստանը մահմեղական արշաւանքի առաջ փակերու մաքովի ծւ կամ կարմի է մէկն ասել, թէ տեղի չի ունենայ ճիշտ սրա հակառակը Երլազի քաղաքականութեան մի շեշտակի փափոխութեամբ, այսինքն Սուլթանը ինքը չի վճռի գործադրել Եկատերինէի քաղաքական ծրագիրը...

Այս, թէ ինչ կը պատահի ապագայում—չը գիտենք: Ռուսաստանի գրութիւնը չափագանց երերուն է. մի քանի ամիսների ընթացքում թէ կառավարութիւնը և թէ ժողովուրդը մի քանի գոյն փոխեց: Սուսնի նման բուսան յեղափոխական կուսակցութիւններ, իրենց ամեն տեսակ բարիք խոստացող ծրագրերով! Կոմս Վիտաէն նոյնպէս բարիքներ խոստանալով կառավարութեան գլուխ անցաւ: Հոկտեմբեր 17-ին հրատարակուեց գահական հրովարտակը, տալով Ռուսաստանին Սահմանադրական ազատութիւն... Ո՞ւր մնացին յեղափոխական պոռոտախօսներից շատերը. մուր մնաց հրովարտակը. ինչ է անում կոմսը: Դրանցից առաջ մենք գիտէինք, որ կայ տիրապետող օրէնք, թէև դաժան, որ կայ ղեկավարող կամք, թէև բոնակալ, որ կայ քաղաքականութիւն, թէև բոնակետական: Գիտէինք նոյնպէս թէ ինչ էին կամենում, ինչի՞ ձգուում Լօբանով-Ռոստովսկիները, Սիպիհագինները, Պլէվէնները և կամ ինչ էին ուղուում սրանց հրամանները ի կատար ածող Թօլիցինները, Դօնդուկովները և այլք: Իսկ այսօր Ռուսաստանին տիրապետում է կամայականութիւն: Հին կարգերը հիմքից խախտուեցան, առանց նորի հիմքը դնելու եթէ առաջ չարիքը բղխում էր մի քանի անհատներից, այժմ բարձրից սկսած մինչև յետին գործովոյը կամ կօղակը դարձել են չարիքի անսպառ աղբիւրներ և ամեն մէկը նրանցից կարող է իւր քէֆի թելադրածի նման վարուել ժողովրդի հետ: Էլ չկայ տիրապետող օրէնք, չը կայ ղեկավարող կամք, չը կայ քաղաքականութիւն: Ռուսաստանի տասնեակ սիլիոնաւոր բնակիչները, առանց ազգի, սեռի ու գասակարգի խարութեան չը գիտեն մվ է իրենց կառավարողը, որ օրէնքին պէտք է հպատակեն՝ հոկտեմբեր 17-ի հրովարտակին, թէ ընդհանուր նահանգապետների, նահանգապետների և ոստիկանապետների—հանդերձ իրենց պաշտօնեաններով—յղացած մասնաւոր հրամաններին...

Ինձ թւում է թէ մինչև Ռուսաստանի վիճակը չորոշուի,

մենք հնարաւորութիւն չը պիտի ունենանք հանգամանքների թելադրածից զատ, ուրիշ որևէ ազգային քաղաքականութեան մասին մտածել Երերուն աւազի վրայ շէնք չեն կառուցանում, անհրաժեշտ է հաստատուն հոդ: Ալեկոծուած ծովի վրայ ենք գտնուում. ուղենք-չուղենք, նրա ալիքների հետ վեր ու վայր պիտի անենք: Բանսատեղում հարցնում է. «Ասէք Բնչ կանի ծովը ընկածը...» — այն պէտք է անենք մենք, այն պիտի լինի մեր ներկայ քաղաքականութիւնը:

Ամեն անդամ երբ հարց է լինում ազգային քաղաքականութեան մասին, լինի ներկայի կամ ապագայի վերաբերմամբ, մեր ուղաղրութիւնը ակամայ դառնում է յեղափոխական կուսակցութիւնների վրայ: Այն օրից, երբ նրանք ծնունդ են առել մինչև այսօր, — նրանք են, որ խօսում են ազգի գոյութեան անունից, նրանք են ազգի ճակատագիրը տնօրինողները, իհարկէ իրենց որոշ քաղաքական ծրագրով:

Ի՞այց գուրս է գալիս, որ միայն յեղափոխականները չեն, որ խօսում ու գործում են յանուն ազգի ու նրա գոյութեան կայ նաև Սրբ. Օրմանեանը և զուցէ մեր կարծածից աւելի բազմաթիւ հայեր, որոնց քաղաքականութեան արտայայտիչն է հանդիսացիլ Պատրիարքը և որոնք նոյնպէս խօսում են յանուն ազգի: Եւ նշանաւորն այն է, որ այս երկու քաղաքականութիւնները երկու միմեանց հակառակ ծայրեր են ներկայացնում: Սրբ. Օրմանեանն ասում է, որ եթէ Թիւրքիայում յեղափոխական շարժում լինի, ազգը ընածինջ կը լինի: Ուրեմն իսէր ազգի գոյութեան, պէտք է յեղափոխութիւնը դադարեցնել: Յեղափոխականներն էլ ասում են, որ բոնապետութիւնը սիստեմատիքաբար ջնջում է ազգին և եթէ այսպէս շարունակուի, Հայաստանում հայ չի մնայ: Ուրեմն իսէր ազգի գոյութեան, պէտք է ժողովրդին դնել ինքնապաշտպանութեան ճանապարհի վրայ յեղափոխութեան միջօցով...

Եւ հենց այստեղից է ծագում այն հարցը թէ «Ո՞րը պիտի լինի հայ ազգի քաղաքականութիւնը», Սրբ. Օրմանեանի, թէ յեղափոխական կուսակցութիւնների:

Եթէ անդամ միաձայն ընդունելու լինենք յեղափոխութեան քաղաքականութիւնը, այնուամենայնիւ դրանով հարցը չի լուծուում: Իհարկէ ամենքի նապատակն էլ մէկ է, բայց այդ նպատակին հասնելու ճանապարհը և միջոցները իրարից տարբեր: Ամենքն էլ իհարկէ համոզուած են, որ մեր յեղափոխականների քաղաքականութեան մէջ եսականութիւն չը կայ կամ չափաւոր եսականութիւն կայ, այնուամենայնիւ եթէ քուէար-

կութեան դնելու լինենք, դուրս կը գան նոյնքան քննադատելի, նոյնքան վիճելի, որքան Պօլսի Հայոց Ամեն. Պատրիարքի քաղաքականութիւնը:

Փորձենք մի թեթև ակնարկ ձգել յեղափոխական կուսակցութիւնը հաւերիս մէջ «Արմենական» կուսակցութիւնն է, Փորթուգալեան էֆ. գլխաւորութեամբ և «Արմենիա» թերթով։ Սրա ծրագրի հետ մենք ծանօթ չենք, բայց գիտենք որ նա կազմակերպել էր սազմիկ խմբեր և դրանց զինելու համար մեծ քանակութեամբ զէնք մտաւ Թիւրքաց Հայաստան, Այդ Ռուս-Թրքական պատերազմից յետոյ էր, Սան Ստէֆանօի 16-րդ յօդուածը Բերլինում արդէն 61 էր գարձել և մարդասէր պետութիւնների ամենամարդասէր դիւանագէտների առաջարկութեամբ մեծ մարդակեր Սուլթանը յանձն էր առել բարենորոգումներ մտցնել Հայկական նահանգներում և նա հաւատարիմ իւր խոստման, ոչփորմները մտցնում էր, ոռուասէր հայ ույային մի քիչ խելքը բերելով։ Մի կողմից յիշեալ յօդուածները, միւս կողմից ոչփորմների մտցնելու եղանակը յուսահատեցը էլ էին հայերին, որի հարազատ ծնունդն էր Փորթուգալեան էֆէնդին իւր կուսակիցներով։ Բայց Փորթուգալեան էֆ. և ուրիշ շաա էֆէնդիներ էլ հենց առաջին քայլափոխում կրցին աւելի մեծ յուսախարութիւն։ Այնքան խոշոր դժուարութիւններով ձեռք բերած և աւելի խոշոր զոհաբերութիւններով երկիրը մտցրած զէնքերը, ամենայն սառնասրտութեամբ հայերը վաճառում էին քիւրդերին և կամ կորցնում հողի տակ։ Այս տղեղ փաստն էր անշուշտ, որ կուսակցութեան հիմնադրին ստիպեց փոխել ոչ միայն իւր քաղաքականութեան տաքատիկան, ալև ամբողջ քաղաքականութիւնը. այն է նա մերժեց զինեալ ապստամբութեան, մինչեւ անգամ զինեալ ինքնապաշտպանութեան հնարաւորութիւնը, առարկելով թէ մի ազգ, որ գեռ հասած չէ ինքնամանաշութեան, յեղափոխութեան գաղափարը մարսել չի կարող, ուրեմն և անպէտք է յեղափոխութեան համար։ Եւ նա իւր գոյութեան վերջին տարիներում քարոզում էր նախ կրթութիւն, ինքնամանաշութիւն և ապա յեղափոխութիւնն...

Փորթուգալեան էֆ. իհարկէ իրաւունք ունէր, եթէ միայն ուսում, կրթութիւն և այն երկրի մէջ մտցնելն ու տարածելը աւելի հեշտ լինէր, քան զէնք մտցնելը։ Դժբաղդաբար

հօթանասուն և ութ թուականների մեր ցոյց տուած չափազանց ոռւսասիրութեան շնորհիւ կրթութեան գործը Թիւրքիոյ հայերի մէջ նոյնքան դժուարացած էր, որքան և գէնք տարածելը և շատ ու քիչ կրթուած հայերը նոյնքան ոռւսական գործակախեր էին հաւալուում, որքան և զինուած յիղափոխականները:

Մի խօսքով, ինքնապաշտպանութեան կամ այլ նպատակի համար ժողովրդին զէնք տալ կարելի չէր, որովհետեւ չը գիտնալով ինքնապաշտպանութեան նշանակութիւնը, զէնքը ծախում էր թշնամուն և ինքնապաշտպանութեան նշանակութիւնը չը գիտէր, որովհետեւ իւր հոգու վրայ ծանրացած ստրկութիւնը թօթափիլու չափ կրթութիւն չունէր և թերևս համոզուած էլ էր թէ ստրկութիւնը մի երկնային պատիժ է, որ պիտի կրէ անտրառոնց Յորի համբերատարութեամբ: Խոկ սրա հակառակ, կրթութեան շնորհիւ ժողովրդին ինքնաճանաչութեան բերելն էլ կարելի չէր կամ աւելի դժուարին էր, որովհետեւ Օսմանեան կառավարութիւնը գրքից աւելի էր վախենում քան զէնքից և նրա մուաքը դժուարացել էր ոչ միայն գաւառներում, այլև մայրաքաղաքում:

Ուրեմն ինչ միջոցի պէտք է դիմել. անշուշտ Փորթուգալեան էֆէնդին ամենայն իրաւամբ կարող է տալ մեզ այս հարցը: Եւ մեր կարծիքով սա շատ լուրջ հարց է ոչ միայն անդարձ կորած անցեալի վերաբերմամբ, այլ ներկայի: Մենք գիտենք որ զրութիւնը Թիւրքիայում այն թուականների համեմատութեամբ այժմ գարձել է կատարեալ դժոխք. այնուամենայնիւ Թիւրքիայի հայերը (բացառութիւնները չը հաշուելով) այսօր էլ վախենում են ոչ միայն զէնք կրել, այլև զէնք պահել, մի բան որ ապացուցանում է նրանց ինքնապիտակցութեան բացակայութիւնը, այն ինչ մի կողմից կրթութեան մուաքը այժմ աւելի սաստիկ է արգելուած, միւս կողմից էլ յառաջ է տարւում հային իւր բնիկ երկրում բնաշխնջնենելու քաղաքականութիւնը:

Բայց շարունակենք:

«Արմենեան» կուսակցութիւնը չը կարողանալով բաւականութիւն տալ ժամանակի պահանջներին, բնական կերպով աշխարհ եկաւ Հնչակեան կուսակցութիւնը իւր սոցիալիստական ծրագրով, որ անփոփոխ շարունակում է մինչեւ այսօր: Ծնորհիւ այն բանի, որ Ռուս կառավարութիւնը հայերի նկատմամբ արդէն ցած էր կրել իւր դիմակն ու հալածում էր, այն ինչ Թիւրքիայում դրութիւնը ծանրանում էր ժամերով

Կովկասի և Թիւրքիոյ աւելի գիտակից դասի մէջ յառաջ եկաւ խուլ դժգոհութիւն, որոնցից շատերը յարեցին յեղափոխութեան, եւ Հնչակեանները գնալով ուժեղացան ձեռք բերելով նաև նիւթական միջոցները պրօպագանդայի և յեղափոխութեան գործը յառաջ տանելու համար։ Շատ կարճ տարիների ընթացքում պյտ կուսակցութիւնը ահազին ծաւալ ստացաւ երկի մէջ և իւր վրայ դարձրեց երոպական ազգերի ու մամուլի ուշադրութիւնը։ Զը նայելով որ Արմեննեանները շատ վաղուց գոյութիւն ունէին, այնուամենայնիւ կարելի է հաստատ ասել, որ յեղափոխութեան գաղափարը Թիւրքիոյ հայերի մէջ մուտք գործեց Հնչակեան կուսակցութեան միջոցով։

Բայց այդ կուսակցութեան պատմութիւնից գիտենք, որ նա աւելի մեծ առաւելութիւններ ունենալուց և բարձրագոյն կրթութեան տէր, խելացի գործիչներով շրջապատուած լինելուց յետոյ, նա գրական ոչինչ չարեց, ընդհակառակը առիթ եղաւ 94—95 թուականների կոտորածներին։

Մենք անշօշափելի ենք թողնում այն հարցը թէ սօցիալիստական գաղափարները որքան համապատասխան էին հայերազային կեանքի պահանջներին ընդհանրապէս, Թիւրքիոյ հայերի դասակարգային պայմաններին մասնաւորապէս։ Զը խօսենք նաև այն մասին թէ սօցիալիստական ծրագիրը ինչպէս էր ասզնեգործւում նացիօնալիստական կանվալի վրայ և ի՞նչպէս էր ուզում ոչ հայ տարրերի տպային շահերը, հայ տարրի շահերի կաղապարի մէջ ձուլել, հաշտեցներով Թիւրդութիւնը Հայութեան հետ, մահմեդականութիւնը քրիստոնէութեան հետ, մարմնացեալ ձրիակերութիւնը աշխատասիրութեան հետ և այր բազմաթիւ հակառակ ծալրերը միմեանց հետ։ Այս չը շոշափենք այս հարցերը և մի ըոպէ ենթադրելով որ գառն ու գալ կարող են միասին արածել կամ որոշ մարդիկ կարող են երկու կամ աւելի հակառակ գաղափարներ աւելի ևս հակառակ բազմաթիւ տարրերի վրայ պատուաստելու ճարպկութիւնն ունենալ, —վերցնենք միայն այդ կուսակցութեան գործունէութեան տակտը և դիւանագիտական ընդունակութեան չափը։

1890 թ. յուլիս 15-ին, Գում-Դարուի մայր եկեղեցու բակում, Հայոց Պատրիարքարանի հանդէպ, Հնչակեանների կազմակերպած աղմկալի ցոյցը տեղի ունեցաւ։ Մի խումբ երիտասարդներ, իհարկէ անկեղծ ցաւակից Թիւրքիոյ հայերի անլուր տանջանքներին, թէև անգիտակից Հիւսիսից քայլ առ քայլ յառաջ շարժուող աւելի սպառնական վտանգին, քարերի ու պատերի վրայ ելած կամ միմեանց ուսերք բարձրացած,

հազարաւոր ունկնդիլների առաջ կրակոա բառերով նկարագրում էին հայերի զբութիւնը գաւառներում:

Նրանք պահանջում էին Պատրիարքից, որ գնայ պալատը և հայի թշուառութիւնը բացատրելով (կարծես Սութանը չը գիտէր) պահանջէ Հայաստանի բարենորոգումը... Եւ բազմաթիւ զեսատի պատանիներ, որոնք թերես հայի ու Հայաստանի մասին դաղափար չունէին, անկցի պոռալով ձայնակցում էին և Պատրիարքին քարշ տալիս դէպի եւրդպի պալատը: Թողնենք տարրական քաղաքավարութիւնը, թողնենք մինչև անգամ իրենց արածի գիտակցութիւնը չունեցող պատանիները և հարցնենք ցուցի ճեղինակներից՝ ի՞նչ միտք ունէր այդ, ի՞նչ կարող էր անե Պատրիարքը, թէկուղ նա լինէր ոչ թէ թրքասէր Աշոքանը, այլ մի մարմնացած ազգասիրութիւն: Զէ որ աճբողջ աշխարհը գիտէր, որ իրկիրը ողողող չարիքի աղբիւրն ինքը՝ Սուլթանն էր: Պատրիարքը կերթար, կը նույնուէր սիրալիր, պալատական համեղ սուրբն էլ կը վայելէր, ապա Սուլթանը պահեստի փափուկ բարձերից մէկն էլ նրա գլխի տակ դնելով ճանապարհ ձգելուց յետոյ, կը շարունակէր իւր հայակերութիւնը աւելի մեծ եռանդով: Սրանով պիտի զոհաննար Պատրիարքը կամ պիտի զոհանային Հնչակեանները: Իհարկէ ոչ, որովհետև Սուլթանի խոստումները վաղուց արդէն կորցը էլ էին իրենց արժէքը: Այս ժամանակ Գում-Գաբուկի հերոսները ուլտիմատում պէտք է զրկէին Սուլթանին ու Հայ-Թրքական պատերազմը յայտարարուած կը լինէր: Զէ որ սրանք բնական բաներ էին, որոնց չը նախատեսելը, ինքըստինքեան անմտութիւն է:

Սակայն տրամադիր չը լինելով յեղափոխական գործերի և գործողութիւնների ղեկը վարողներին անմիտ համարելու, միշտ իմ գլխում անքուն ցցի նման պտոյս է եկել այն հարցը թէ մեր խելօքները մում վրայ դրած ունէին իրենց յոյսը. սահմանագլխում պատրաստ կանգնած զօրքի ու նաւառորմի, հայրենիքի փրկութեան համար զէնքը ձեռքին նահասակուելու պատրաստ Թիւրքիոյ հայերի, թէ զաշնագրի տակ ստորագրող մեծ պետութիւնների, որոնցից մէկը և գլխաւորապէս — Ռուսաստանը արդէն ցոյց էր տուել իւր ժանիքները:

Այս հարցի պատասխանը ես չեմ գտել և հաւատացած եմ, որ Հնչակեաններն իրենք էլ չը պիտի կարողանան դրական պատասխան տալ:

Գում-Գաբուկի դէպքից յետոյ, Հնչակեանների ասելով, երկիրը յեղափոխականացաւ կամ առնուազն յեղափոխութիւնը

լայն ծաւալ ստացաւ եւ երեխ Սամնոյ առաջին գէպքը, որ տեղի ունեցաւ 94 թուբն և նրա կրած սոսկալի ջարդի համար հաւատ ազգը պարտական է և նույն յեղափոխութեան լայն ծաւալ ստանալուն: Հապան 95 թ. սեպտեմբերի մեծ ցոյցը Բ. Դրան դէմ:

Պէտք է գիտնալ որ Թիւրքիան Հայաստանը նուաճելուց ի վեր այդ առաջին անգամն էր, որ Սամնոյ պէս մի կիսանկախ գաւառ ենթարկւում էր կոտորածի և հրկիզման, որպէս և առաջին անգամն էր, որ բռնւում ու Բրիտանիոյ գևապան ֆ. Կերրիի ջնորհիւ յայտնուում էր, որ այդ կոտորածի հրամանը տուել է Սուլթանը և գրել է Սուլքա փաշան\*: Այս բացարձակ ոճրագործութիւնը մեծ յուղմունք յառաջ քերեց մայրաքաղաքում և վախեցած Սուլթանը Ս. Իղմիրլեանին հաստատեց պատրիարք, թէև վաղուց կասկածի տակ էր: Այնուամենայնիւ յուղմունքը ըստ գաղաքաց, ընդհակառակը այդ անօրինակ ջարդի մանրամասնութիւնների հետ աւմլի ևս սաստկացաւ, երբ Պօլի հայերի մէջ միտք յղացուեց փակել եկեղեցիք, խանութիւններն ու տները և ազգովին, առանց դասակարգի, հասակի և սեռի խարութեան գնալ Սուլթանի պալատը և պահանջել կամ մահ կամ տանելի կեսանք...

Սա 95 թ. սկզբներումն էր. ամբողջ լուսաւոր աշխարհը, ուր հասել էին կոտորածի լուրերը, կեղծ-թէ անկեղծ, յուղուած էր. Թիւրքիայով շահագրգոռուող պետութիւնները, որոնք իհարկէ հեռաւոր հաշիւներ ունելին, Սուլթանի այդ անխոնես վարմունքով ցնցուել, գլուխները կորցրել էին, որով եթէ տեղի ունենար վերոյիշեալ համազգային ցոյցը, կը լինէր մի շատ հոյակապ բան և մի գիտէ, գուցէ ցանկալի հետևանք էլ ունենար\*\*), Վերջապէս սա այնպիսի լուրջ մօմէնստ էր, որով չօգտուելը եթէ ներելի է քաղաքական համագամանքները կշռադատելու անկարող ժողովրդին, ամենակն ներելի չէ մի քաղա-

\* ) Սուլթանը Սուլքա փաշային թոյն ընդունել տուեց, որից յետոյ նոյն ձևով թունաւորուեց և բժ. Փեշտմանճեանը նրա համար, որ հակառակ տարածած լուրերի և յոյն ու այլ ազգի վարձկան բժիշկների լայտարարութեան, նա պնդեց, որ փաշան թունաւորուած է:

\*\*) Իրերի արդքան անորոշ դրութեան ժամանակ եթէ Անդրկան քաջութիւն ունենար Թրբական ջրերում զանուող նաւատորմով զրաելու Եգէական ծովի վրայ գտնուող Թրբական ստացուածքից մէկն ու մէկը և հայկական հարցի առջիւ անէր վճռական առաջադրութիւն, նա յաղթանակը տարած կը լինէր: Սակայն Ռօգբերին վախկոտ դուրս եկաւ:

քական կուսակցութեան, որ ուրիշ բանի համար չէր արիմ թափել տուել, ևթէ ոչ արդ արիւնով բարեյաջող մօմէնս ստեղծելու և նրանով օգոսուելու համար:

Սակայն յաջող բռպէն ձեռքից փախաւ. Թիւրքիայով և նոյնիսկ մէկը միւսով շահագրգոռուող պետութիւնները ժամանակ ունեցան մտքեր փոխանակելու և տեղի ունեցան հակառակ համախմբումներ. Մենք գիտենք որ նուսաստանը հակառակ էր Հայաստանի բարենորոգման. Ֆրանսիան, յանձին իւր արտաքին դրծերի մինիստր հոչակաւոր Հանօտօի, յարեց նուսաստանին, իսկ Գերմանիան, որ 94 թ. վերջերբում արդէն գաղտնի դաշնակցութիւն էր կնքել իւր սիրելի Վեհափառակցի՝ Սուլթան Համբէրի հետ, իւր դաշնակցից Աւստրօ-Ռւսացիային էլ հետն ամնելով, միացաւ առաջիններին \*): Իտալիան՝ հակառակ իւր կամքի, ստիպուած էր գոնէ չեղոքութիւն պահպանելու, որովհետեւ եռապետական դաշնակցութեամբ ձեռք ու ոսքը կապկապուած էր Անգլիան մնաց մենակ: Բացի այդ Անգլիոյ ներքին քաղաքական հանգամանքները պարզ ցոյց էին տալիս, որ Ռողը իւր երերուն քաղաքականութեամբ երկար չի կար կարող կանգուն մնալ և կառավարութեան դեկը այսօր կամ վաղը կանցնի պահպանողական կուսակցութեան ձեռքը Լորդ Սոլսրիի գլխաւորութեամբ, որով հայկական հարցի միանգամ էլ խորտակուած լինելն այնքան պարզ էր, որ շատ ու քիչ քաղաքական հոտառութիւն ունեցող մարդը, գեռ չեմ անում յեղափոխական կուսակցութիւնը, կարող էր շատ լաւ տեսնել այդ:

Բայց Հնչակեան յեղափոխական կուսակցութիւնը սպասածից աւելի կարճատես գտնուեց, նպաստաւոր բոպէն անցած լինելուց յետոյ, երբ հայկական հարցը արդէն ջուրն էր նետուած, մի քանի հազար հոգով դուրս եկան Գում-Դարուի մայր եկեղեցուց և յեղափոխական երգեր երգելով գնացին դէպի Բ. Դուռը Մեծ Եպարքոսին մատուցանելու այն պետիցիան, որի պատճէնը վաղօրօք դրկուած էր օտար պետութեանց բոլոր դեսպաններին \*\*):

Ա.Պ. մեծ ցոյցը տեղի ունեցաւ 1895 թ. սեպտեմբերի 18-ին

\* ) Թիւրք-Գերմանական համաձայնութեան լուրը եւ հաղորդել եմ «Նոր-Դարձ»-ին 1894 թ. դեկտեմբեր 2-ին, որ լոյս է տեսել 1895 թ. № 3 ում:

\*\*) Այդ պետիցիան իւր ժամանակին ես ուղարկել եմ «Նոր-Դարձ»-ին, ուր նա լոյս է տեսել ամբողջովին:

Խաչվերաց տօնի հրկուշաբթի օրը: Բայց ի՞նչ հետեանը ու-  
նեցաւ Անփորձ պատանիները, որ անշուշտ վառուած էին  
հայրենիքի սիրով, բայց իրենց արածի գիտակցութիւնը չու-  
նենալով, գնում էին ուրախ ու զուարթ, յանկարծ մի նեղ  
փողոցում իրենք իրենց զինուորներով պաշարուած տեսնելով  
հինգհարիւրից աւելի վեց հարուածեան ատրճանակներ՝ իրենց  
փամփուշտներով թափեցին գետին ու ցանուցիր փախչել  
սկսան, իրենք իրենց մատնելով պատրաստ կանգնած խուժանի  
և ոստիկանութեան մահակներին:

Սկզբունքով հակառակ լինելով արդէն ուշացրած ցոյցին,  
աւելի ևս հակառակ էի նրա զինուած կատարելուն. նախ նրա  
համար, որ կասկածում էի թէ նրանք քաջութիւն ունենան  
ըստ հարկին գործադրելու և երկրորդ նրա համար, որ պէտի-  
ցիան զրուած էր շատ համեստ ոճով և բովանդակում էր աւելի  
համեստ պահանջներ: Մեր կարծիքով, եթէ այդ ցոյցը տեղի  
ունենար անզէն, խաղաղ կերպով, թէև դարձեալ հայկական  
արդար դասը ոչինչ չէր շահի, գոնէ յեղափոխութիւնը այնքան  
ամօթալի պարտութիւն չէր կրի: Սակայն եթէ մեր նման մահ-  
կանացուների կարծիքը ոչնչի տեղ զնելով ծանրագլուխ Հըն-  
չակեանները, մեր խելքին անմատչելի պատճառներով վճռել  
էին զինուած դուրս գալ, —այն ժամանակ անհրաժեշտ էր, որ  
նրանք իրենց ճանապարհո զէնքով հարթէին: Զինուած, թէ  
անզէն—կոտորածը անխուսափելի էր, բայց ուրիշ բան է  
մեռնել զէնքը ձեռքին, ուրիշ բան է զէնքը ձգելով փախչել  
ու մեռնել խուժանի մահակներով: Առաջին դէպօւմ կուսակ-  
ցութիւնը կը մնար իւր կոչման բարձրութեան վրայ և այն  
սարսափը, որ նա տարածել էր Կ. Պոլսի վրայ մի շարք խի-  
զախ գործողութիւններով ու տեսորներով, յառաջ բերելով  
այն համոզումը թէ Հնչակեան կուսակցութեան դրօշակի տակ  
գործում է ամբողջ հայ աղջը—կը մնար համոզում և հաւանա-  
կան է որ աւելի լուրջ դիմադրութիւններից խուսափելու հա-  
մար հեռաւոր թաղերում կոտորած չը լինէր: Երկրորդ դիպուա-  
ծով կառավարութիւնը տեսաւ, որ ինքը խարուած է, որ  
գործ ունի ինչ-որ անփորձ երեխանների հետ. ուստի նա ոչ  
միայն չը բաւականացաւ հեռաւոր թաղերում քազմաթիւ ան-  
մեղ հայեր կոտորելով, այլև ձեռք առաւ անփորձ կուսակցու-  
թիւնը հենց իւր խանձարուրի մէջ խեղդելու կտրուկ ու հա-  
մարձակ միջոցներ, մի բան որ չէր արել մինչև այդ օրը:

Եւ այդ նրան յաջողուեց, շնորհիւ երոպական մի բանի  
պետութիւնների համերաշխութեան Սուլթանի հետ, այն պե-

տութիւնների, որոնց մարդասիրութեան վրայ յոյս էին դռել մեր խելօֆնները:

Ինչպէս տեսաւ ընթերցողը, Հնչակեան կուսակցութեան քաղաքական ծրագրի մասին մենք ոչինչ չը խօսեցինք, այն պարզ պատճառով, որ ամենակենսունակ, լուրջ ու նպատակաշարմար ծրագիրն անդամ բացի օգուտ չը տալուց, վնաս կը բերի, եթէ նրա գործադրողները իրենց գործողութիւնները համաձայնեցնել չը գիտեն անմիջական առնչութիւն ունեցող իրերի դրութեան հետ: Իսկ այդպիսիք կոչուած չեն և չեն եղել ազգային քաղաքականութեան ներկայացուցիչը լինելու:

Չը խօսելով հայկական սոսկալի ջարդի մասին, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի ցոյցի հետևանոք ոչփորմների ծրագիրը ընդունելուց անմիջապէս յետոյ \*), երբ Հնչակեանները բարոյական և Փիգիքական պարտութիւն կրեցին, զլուխ բարձրացրից Դաշնակցութիւնը, թէև նա մի քանի տարի էր, ինչ կաղիկաղ գործում էր: Այսօր հայ յեղափոխական կուսակցութիւնների մէջ ամենաուժեղն է, թէև ըստ մեր կարծիքի, այդ ուժեղութիւնը աւելի այժմ տիրող հանգամանցներին պէտք է վերագրել քան ուրիշ որևէ բանի:

Դաշնակցութեան հիմնական ծրագրին լաւ ծանօթ չեմ գիտեմ որ նա գործուած է ազգայնութեան վրայ, Բայց վերջերքում, պ. Ենգիբարեանի սաելով, նա իւր հիմնական ծրագրին պատուաստել է սօցիալիզմ \*\*) անշուշա ժամանակի պահանջներին և ընդհանուր տրամադրութեան յարմարուելու համար:

Թէև այժմ մեզանում, նոյնիսկ արտասահմանում աշխատում են մի անգակտելի կազ ստեղծել նացիօնալիզմի և սօցիալիզմի միջն, սակայն դժուար թէ կարելի լինի գայլին ու գառան մի սուրբում կապել: Մասնաւորապէս հայերիս մէջ

\* ) Հոկտեմբեր 17-ի մանիքնեստին հետևող սոսկալի ջարդերը Ռուսաստանում, ինձ ակամայ լիշեցնում էին ոչփորմների ծրագրին յաջորդող ջարդերը Թիւրքիայում 1896 թ.:

\*\*) Տ. Վ. Դ. բանուորական կուսակցութիւնը Կովկասի հանք-արդիւնաբերական կենդրուններում ուժեղանայով, հայ բանուորները, որը կազմում էր Դաշնակցութեան ամենապատկառելի ոյժը, թիւրուեց առաջին կողմը, որովհետև նա խոստանում էր պրօլետարիատ դասի անմիջական շահերը պաշտպանել, եւ եթէ Դաշնակցութիւնը սօցիալիզմը չընդունէր, կարող էր քայբայուել: Արդէն Հայ Ս. Դ. բանուորական կուսակցութեան հիմնադիրներից մեծ մասը նախկին Դաշնակցականներ են:

որոշ՝ ակսիօմանների վրայ շատ քիչ ուշադրութիւն դարձնող կայ. Վրդէն մեր յեղափոխական, նոյնիսկ լեզալ մարմինների հրւանգութ և կրիտիքալի չը դիմացող կողմն այն է, որ նրանց քաղաքական, կրթական և այլ ծրագրերը հակասութիւնների ու անլարմարութիւնների մի շատ խայտաճառուկ կոյտ են ներկայացնում: Տեղը եկաւ սօցիալիստ են, տեղը եկաւ նացիոնալիստ կամ մի ուրիշ բան, իրաւ ոչ այս եւ ոչ այն, այլ...

Էն, թող մնացածն էլ ընթերցողը գուշակի:

Ուրեմն ամենից առաջ ըննադատելի է ոչ թէ Դաշնակցութիւնը իւր գործողութիւններով, այլ նրա նացիօնալ-Սոցիալիստական քաղաքականութիւնը, որ յաւակնում է աղդային քաղաքականութեան տեղ բոնիր: Բայց մինչև որ Դաշնակցութեան նոր ծրագիրը հասարակութեան սեփականութիւն կը դառնայ, առանց որին հնարաւորութիւն չը կայ նրա առաւելութիւնների կամ պակասութիւնների մասին խօսելու, դարձեալ կանգ առնենք այդ կուսակցութեան կատարած գործերի պատմութեան, նրա տաքտիկայի և քաղաքական հոտառութեան վրայ: Այս բանին մենք նոյնքան մեծ նշանակութիւն ենք տալիս այն խորին համոզմամբ թէ, ինչպէս վերն էլ ասացի, ամենաօդտակար և շատ խելացի ծրագիրն անգամ կարող է վտանգաւոր հետևանքներ յառաջ բերել, եթէ նա անշնորհք ձեռքբռում է գտնուում: Այդ պատճառով էլ ես արձանագրեցի Հնաշակեանների կատարած գործերից նշանաւորները: Այժմ տեսնենք թէ ի՞նչ է արել Դաշնակցութիւնը:

Ամենամեծ գործը, որ կատարել է Դաշնակցութիւնը և որով պարձենում է նա շարունակ—դա բանկ-Օտոսմանի գրաւումն էր, ուր Օսմաննեան կառավարութիւնը նոյնքան դրամ ունի, որբան ես և դուք, յարգելի ընթերցողներ: Բայց ի՞նչ հոգ թէ այդ դրամատունը անուանական կերպով միայն Օտոմաննեան է: բաւական է, որ գտնուում է Սուլթանի մայրաքաղաքում և շէնքը մարմարեայ է ու մեծարժէք: Ուրեմն պէտք էր նրան գրաւել և 1896 թ. օգոստոսին Դաշնակցութեան հերոսները գրաւեցին:

Պէտք է ասել, որ հայ հասարակութիւնից բացի ամենքն էլ իմացած են եղել Դաշնակցութեան նպատակը և սրա անհերքելի ապացոյցը այն է, որ հայ մշակները իրենց առօրեայ աշխատանքի վրայ էին այն ժամանակ, երբ 40—45 հազար մահամեղական մշակներից ոչ մէկը դուրս չէր եկել գործի, այլ կազմու պատրաստ կանգնել էր քաղաքի այն մասերում ուր հայեր էին բնակւում: Մի ուրիշ ապացոյցն էլ այն է, որ մեր պատ-

մական հերոսները հազիւ թէ բանկ Օտօմանը մտած ու գրաւած լինէին, երբ սկսուեց ջարդը, կոտորածն ու թալանը, օրը ցերեկով, բոլոր օտարազգի բնակիչների աչքի առաջն, կարծես հայ յեղափոխական Դաշնակցութիւնը և մահմեղական խուժանը վաղօրօք խօսքը մէկ էին արել, որպէսզի մէկը բանկը գրաւած ըստէին, միւսը սկսի հայերին ջարդել:

Հաւատացէք որ իս մտքով երեկք չէր կարող անցնել թէ մեր խնջօք հայերի խելօքագոյն ներկայացուցիչները, երբնիցէ, թէկուզ տենդ ու ջերմով բռնուած դէպքում, կարող էին յղանալ ու գործադրի այդքան անմիտ, այդքան աննպատակ մի գործ: Այսօր ի հարկէ այդ բանում մահանեխի հատիկի չափէլ տարակոյս չունիմ, քանի որ հենց իրենք են պնդում և այս այնպիսի պարծանքով, որպէս թէ դա լինէր մի չը տեսնուած հերոսութիւն:

Այսուամենայնիւ մենք՝ մահկանացուներս թոյլ ենք տալիս հարցնելու: Ինչ էր Դաշնակցութեան նպատակը, բանկ Օտօմանը այնքան հերոսաբար գրաւելով ինչ նպատակի էր ուզում հասած լինել, Քանի որ բանկը գրաւողները, մանաւանդ բանկը գրաւելու ծրագիրը յղացողները քաջ գիտէին, որ նա օտար կապիտալով կազմուած մի հաստատութիւն է (այդ չը գիտնալը ամենամեծ ամօթը կը լինէր), գուցէ համոզուած են եղել թէ գրանով Եւրոպական կամ աւելի ճիշտը՝ միջազգային միջամտութիւն յառաջ կը գալ: Այս, ամենքը, որպէս և կրոպական պետութիւնների կարինետի խոշոր անձնաւորութիւնները, ամեն բան լինելուց առաջ նիւթապաշտ են և նիւթական շահի հարցը կազմում է նրանց էն հիւանդու, էն դիւրազրգիւ կողմը: Սակայն լինչ էր ներկայացնում այդ գրամատունը, որի գրաւումը կարողանար միշազգային լինդիր յարուցանել և ազգել կը ուղական պետութեանց քաղաքականութեան վրայ: Պօլսի գեսպաններից մէկը՝ Ֆօն-Կալիչէն մի օր բացարձակապէս ասել էր, «Թո՞ հայերը կրոպական պետութեանց վրայ յոյս չը դնեն, որովհետեւ իրերի դրութիւնը այնպէս է, որ ոչ միայն հայերին, այլ և եթէ դեսպաններին սորթել տայ: Սուլթանը, ոչ մի պետութիւն տեղից չի շարժուի: Թիւրքիան այն լինձորն է, որ եթէ գլորուի յառաջ կը գայ մի նոր Տրօյական պատերազմ»: Այս ինչ բանկ Օտօմանը մի զրամատուն էր—աւելի ոչինչ: Իսկ այդ ոչինչը գրաւելը այն մեծ բարիքն ունեցաւ, որ ամբողջ մի քանի օր ու գիշեր ոչխարի նման մորթեցին հայերին:

Այդ սոսկալի ջարդից յետոյ, անսալով իրենց խղճի խայ-

թոցին եթէ դրամատունը ամբողջովին, իհարկէ իրենք էլ մէջը, օդը ցնդեցնէին—այդ կը լինէր բնական բան և մենք այսօք նրանց անունը կը յիշէինք որպէս իրենց յանցանքը քաւելու քաջութիւնը ունեցողների: Բայց արի տես որ Դաշնակցութեան քաջերը այդ քաջութիւնն էլ չունեցան. ընդհակառակը Ռուսական գեղագանատան առաջին թարգմանի՝ Մաքսիմովի հզօք պաշտպանութեան տակ, նրա թեր մտած, անվտանգ դուրս եւ լան գրաւած ամբոցից և ոռումբները խնձորի նման ձեռքներին խաղացներով անցան հայ արիւնով ներկուած և յօշուուած հայ դիակիներով ծածկուած փողոցներով ու շոգենաւ նստելով ճաւապարհ ընկան դէպի եւրոպա:

Եհ, այսպէս վարուելու համար, սիրտ կոչուած մսի զգաց յուն կտորի տեղ ապառած պէտք է դրուած լինի: Այլապէս անկարելի է այզբան անսեղ մարդկանց արիւնի պատճառ դաւնալ:

Այդ եղեռական դէպքից յետոյ Դաշնակցութեան վարկը բոլորովին ընկաւ Պօլսի հայերի աչքում, որը արձագանք տուեց նաև գաւառներում: Եւ նա զինագույղար հրատարակեց: Բայց վերագանուով Կովկաս, ես բոլորովին տարբեր տրտմագրութեան հանգիպեցի: Բանը նրանունն էր, որ Կովկասի հայերը հնարաւորութիւն չունենալով իրերի դրութիւնը իրենց իսկական արժէքով զնահատելու, Դաշնակցութեան տուող բացատրութիւններն ու առարկութիւնները, օգոստոսեան անյաջողութիւնների մասին. հալած իւղի տեղ էին ընդունելի Ոչ մի դժուարութիւն չը կար անյաջողութեան ամբողջ մեղքը այս կամ այն պետութեան վզին փաթաթելով, իրենք արեան գետից մաքուր դուրս գալու: «Սյաինչ պիտութիւնները խօսք էին տուել, բայց գաւաճանեցին մեզ քրազը արգէն սովորական էր դարձել: Զէ՞ որ Բ. Դրան դէմ եղած ցոյցի ժամանակ էլ Հնչակեաններն էին հաւատացնում միամիտ հասարակութեան թէ անգլիական հզօր նաւատարմը կազմ ու պատրաստ կանգնած է իրենց թիկունքին և քանի քանի միամիտ հաւատացեաներ Մարմարականի եղերքը կորած անթարթ նայում էին դէպի ծովի հեռու հորիզոնը, յուստալով թէ ահա, ուր որ է, այդ հորիզոնի վրայ կերևեն փրկարար նաւատարմի դրոշակակիր կայսերը: Ո՞վ հնարաւորութիւն ունէր նման հաւաստիացումների ճշտութիւնը ստուգելու, կամ Կովկասի հայերից, մանաւանդ յեղափոխութեան հզօր սիւնը կազմող հասարակ գասակարգից քանի հոգի կը գտնէիք, որ շատ ու քիչ ծանօթ լինելով արտաքին քաղաքականութեան և պիտութեանց դիւանագիտական:

յարաբերութիւնների հետ, կարող լինէին այդ սիսումաւոր ստեղը բանելու:

Եւ իրերի դրութեան հետ ծանօթ չը լինելուն պէտք է վերազրել այն, որ յեղափոխութիւնը, շնորհիւ անշնորք, անհեռատես գործիչների թիւրքիայում վարկարել լինելոց ետոյ. նա ընդհակառակը կովկասում ուժեղանում էր:

Դաշնակցութիւնը զանազանուում էր Հնչակեաններից այն առաւելութեամբ, որ նիւթապէս հարուստ էր, մի բան որ միջոց տուեց նրան նորանոր արշաւանքներով իւր ընկած վարել թիւրքիու հայերի աչքում վերականգնելու: Այդ արշաւանքների քաղաքական նշանակութեան և նրանց լառաջ ըերած միշտ ողբերգական հետևանքների վրայ մի առ մի կանգ առնելը աւելորդ է նախ նրա համար, որ նա մեղ աւելի հեռուն կը տանէր և երկրորդ նրա համար, որ նրանք չափազանց դժգոյն են Սամոյ վերջին դէպքերի հանդէպ:

Խօսքս աշխարհահռչակ Անդրանիկի արած արշաւանքի մասին է, այն Անդրանիկի, որի լուսանկարը ձեռքից ձեռք են անցնուած, իսկ աշուղները երգեր ու լեգէնդաներ են յօրինուած:

Ո՞վ էր Անդրանիկը: Ես մի ըոպէ տրամադիր եմ հաւատապատ որ նա մի մարմնացեալ հայրենասիրութիւն էր, մի անգուզական քաջութիւն էր, մի ազնիւ հոգի, որի զգայուն սիրուը միայն ընդունակ էր անդրադարձնելու իւր մէջ ամբողջ ազգի վլրշտ ու տառապանքը, վերջապէս մի հայ Աքիլէս էր, այդ բոլորը շատ լաւ: Այնուամենայնիւ յիշեալ աննման առանձնայատկութիւններն ունենալուց յետոյ, նա՝ որպէս հերոս Սասնոյ վերջին դէպքերի, կանգնած է մեր աչքի առաջև, որպէս մեր աչքի ասջեն է երկրորդ անգամ բարբարոսների հուր ու սրին մատնուած այդ երկիրը իւր մերկ ու քաղցած բնակիչներով, բոյնը բանդուած թոչունի նման անտուն անտէր թափառող հայերով...

Մենք գիտենք որ ամբողջ հայ ազգը, որպէս և հայ յեղափոխական կազմակերպութիւնները միշտ իրենց յոյսը դրած են եղել երոպական միջամտութեան վրայ: Այդ շատ բնական է. ջրում կեղղուողը յարդի կտորից էլ է բռնուած: Ուրեմն յեղափոխական կազմակերպութիւնները, որ յօժարակամ ստանձնել են մի ամբողջ ազգի ճակատագրի տնօրինութեան գործը, իրենց յոյսը երոպական միջամտութեան վրայ դնելով, նրանք պէտք է որ այդ պետութեանց փոխադարձ յարաբերութիւնները աչքի առաջ առած առած լինէին: Ապացուցանելու սրանց դիւանագիտական հանճարը, միջանկեալ մի դէպք պիտի պատմեմ:

Սասնոյ վերջին դէպքը դեռ տեղի չէր ունեցել սակայն՝ նկատելի էր, որ Դաշնակցութիւնը ինչ-որ նախապատրաստութիւններ է տեսնում Անդրանիկի ծրագիրը գործադրելու։ Այդ տեսնելով, ես մասնաւոր խօսակցութիւն ունեցայ այդ կուսակցութեան աղդեցիկ անդամներից մէկի հետ, այն էլ վկայի ներկայութեամբ երկար տարիներ ապրած լինելով Թիւրքահայ գաղթականների, մանաւանդ պանդուխտների մէջ և հետաքրքրուած լինելով նրանց կեանքով, ստացածս տեղեկութիւնների վրայ հիմնուելով խօսակցիս ասացի, որ Թրքաց Հայաստանում ապստամբական շարժում անել անկարելի է, որովհետեւ Օսմանեան կառավարութիւնը հային անվտանգ դարձնելու համար շրջապատել է արիւնարրու տարրերով, որոնք շատ լաւ զինուած լինելով, հեշտութեամբ կարող են անզէն հայերին տեղնուտեղը չնշել Գալով երոպական միջամտութեան, ես յիշեցրի նրանց փոխազարձ յարաբերութիւնների բացարձակ աննպաստ լինելը հայկական հարցին, շեշտելով այն բանի վրայ, որ ներկայ պայմաններում ամենափոքրիկ առիթն անդամ բաւական է, որ 94—95 թուրականների ջարդերը վերըսկսուին։ Եթոյ խօսակցիս ուշադրութիւնը դարձրի այն բանի վրայ, որ հայկական վտանգի կենդրոնը Պօլսից փոխադրուել է Պետերբուրգ և այն կարծիքը յայտնեցի, որ՝ նայելով բազմագական հանգամանքների դասաւորութեան հայը խոշոր գործ արած կը լինի, Իթէ փոքրիկ չարիքին համբերելով, մեծագոյն շարիքից խուսափի։ Խօսակցիս յիշեցրի անցեալ տարու սկըզբներում հայի կատարած դերը ընդդէմ Թիւրքիայի և ջանացի համոզեցնել որ հայը խոհեմութիւն արած կը լինի, եթէ հնար գտնի Օսմանեան կառավարութեան մօտենալու գէթ առ երես, եթէ անկեղծ և վերջնական հաշտութիւն կայացնել կարելի չը լինի...

Խօսակցիս համբերութեամբ և ըստ երեսյթին հետաքրքրութեամբ լսելուց յետոյ, իմ կարծիքների դէմ այն կամ ոչ չասաց, այլ լակոնական ոճով ուշադրութիւնս դարձրեց Ռուս-Աւստրիական ծրագրի վրայ Մակեդոնիայի առթիւ և այդ առթիւ կայացած երոպական համաձայնութեան վրայ, խորին հաւատքով ասաց, որ եթէ Հայաստանում յեղափոխական շարժում լինի ու կոտորածներ տեղի ունենան, նախ որ կոտորածը մեծ չի լինի և երկրորդ, որ աւելի գլխաւորն է ու ցանկալին, երոպական պետութիւնները անպայման յառաջ կը քաշեն նաև Հայկական հարցը, որը կը լուծուի Մակեդոնականի հետ միասին։

Խեղճ զիալոմատներ. դեռ չը գիտեն, որ Թիւրքիան ինքը իրին կրոպական հողի վրայ ժամանակաւոր հիւր է համարում և այդ պատճառով այնքան մեծ արժէք չի տալիս ոչ միայն Մակեդոնիային, այլև չընաղ Պօլսին, որքան մեծ արժէք է տալիս իւր ասիական ստացուածքի ամեն մի թիզ հողին։ Թիւրքիան խորին կերպով համոզուած է, որ շուր ուշ գուրս պիտի քշուի Եւրոպայից, որ Արարիայի ամենամեծ մասը նոյնպէս ձեռքից պիտի ընկնի։ Նա պէտք է մնայ Փոքր-Ասիայում, որի համար էլ ամեն ճիգ գործ է զնուած Իրանի բնակիչների համակրանքը ձեռք բերելով, Շահերի գահը իրենի հնա միացնելու, աչք դնելով միևնոյն ժամանակ Թիւրքեստանի լայնածաւալ հողերի վրայ...

Հակառակ քաղաքական հանգամանքների բացարձակ աննպաստ լինելուն, այնուամենայնիւ Անդրանիկը սկսեց ու վերջացրեց իւր միսական և հայ Կուրոպատկինը այժմ հանգըստանում է Եւրոպայի ազատ երկրներից մէկում։ Բայց յիշմում է արդեօք Սասունի կրած տառապանքները, նրա բարուքանդ գիւղերը—մենք այդ չը գիտենք։ Թերևս նա մեն-մենակ աւելի շատ է տառապում և աւելի սաստիկ տանջւում հոգով ու սրտով քան Սասուն սովալլուկ, մերկ, անտուն ու անտէր ժողովուրդը։ միաւն թէ այդ տառապանքով չի հերքւում այն, որ իւր և իւր կուսակցութեան արածը քաղաքական մի խոշոր յիմարութիւն էր։

Ես մի բաղդախնդիր ազգասէր էի ճանաչում Զաքրեան աղքանունով, նա մի բան էր միայն բարոզում—Կիլիկիա և ղրանից գուրս փրկութիւն չէր ընդունում։ Ասում են որ կոմս Լուիս-Մելիքեանն էլ միևնոյն կարծիքին է եղել։ Թող որ մէկը լինի բաղդախնդիր, իսկ միւսը աւելի ոռւս գեներալ և Ռուսաստանի շահերը որոնող, քան հայ և հայրենասէր, այնուամենայնիւ պէտք է խոստովանել որ նրանք աւելի լաւ են ըմբռնած եղել Հայաստանին շրջապատող պայմանները, քան Փոքրթուղարկեանները, Նազարբէկեանները ու Միքայէլեանները, իրենց ամբողջ հետևորդներով։

1896 թ. սկզբներում, Պօլսում յանկարծ լուր տարածուեց թէ հայերը Վանայ ամբոցները գրաւել են, իսկ Ռուսական զօրքը մօտենում է Երզրումին։ Այդ այն օրերումն էր, երբ քաջ Զէյթունցիք զրաւել էին զօրանոցը և գերի վերցրել զինուրներին, իսկ կրոպական պետութեանց դեսպանները լսած լինելով, որ Սուլթանը մտադիր է Զէյթունը ոմբակոծելու, խորհրդակցում էին արգելել այդ բանը, թէև նելիդովը դես-

պանսերին խաբելով, իւր առաջին թարգմանի, հայատեաց Մաքսիմովի միջոցով յորդորում էր Սուլթանին փութացնել ոմբակոծութիւնը այնպէս, որ մինչև որ գեսպանները միջամտէին, Զէյթունը արդէն քարուքանդ եղած լինի: Շատ պարզ էր որ ոչ հայերն էին Վանայ ամրոցները գրաւել, ոչ էլ Ռուս զօրքը էրզրումին մօտեցել Այդ սենսասիօն լուրերը տարածել էր ինքը Սուլթանի կառավարութիւնը, իհարկէ քաղաքական որոշ նպատակով և թերեւ նոյն Նելիդով էֆէնդիի խորհրդով:

Բայց թէ մում խորհրդով և քաղաքական ինչ նպատակով էր Դաշնակցութիւնը սենսասիօն լուրեր տարածում Կովկասի հայերի մէջ, համար-համարի ետեից բաց թողած թռուցիկների միջոցով. Բնչու էր այնքան քքուն լուրերով կերակրում մեզ Անդրանիկեան արշաւանքների մասին - այդ գժուար է գուշակել Միայն մի բան էր կատարում մեր աչքի առաջն, այն է որ ժողովրդի մէջ մի տեսակ վարակիչ ոգուրութիւն էր տիրում:

Վարակիչ բառը ընդգծեցի նրա համար, որ շատ չանցած՝ Դաշնակցութիւնից վարակուած Հնչակեաններն էլ սկսեցին թռուցիկ խմբեր կազմակերպել յատկապէս Անդրանիկին օգնութիւն հասցնելու մտքով. Իմ հարցին թէ ինչ մտքով են ուղարկում և ինչու, բանի որ՝ համաձայն կուսակցութեան պատգամաւրական ժողովի վճռին Հնչակեանները ոչ միայն անսպատակ էին գտել Հայաստանում շարժում յառաջ բերելը, այլև այնքան վտանգաւոր, որ վճռել էին վորձ անել ուզող-ներին էլ յետ կանգնեցնել այդ մտքից... և իմ այն դիտողութեան, որ այդ անձնուրաց երիտասարդներից կազմած խմբերը հենց սահմանի վրայ են ջարդուում են Օսմանեան և Ռուսական սահմանապահ զօրքերի համերաշխ գնդակներով - Հնչակեան կուսակցութեան յայտնի գործիչներից մի քանիսը պատասխանեցին թէ երիտասարդութիւնը այլպէս է պահանջում. նրանցից շատերը Դաշնակցութեան կողմը կանցնեն և կուսակցութիւնը կը քայլայուի, եթէ նրանց պահանջը չը յարգեն....

Թող որ հայկական արեան հեղեղով ծածկուի Հայաստանը, թող որ անձնուրաց երիտասարդները ջարդուեն, կոտորուեն, միայն թէ կուսակցութիւնը չը քանդուի - այսպէս են դատում մարդիկ:

Վերակառնանք մեր հարցին:

Ցեղափոխական կուսակցութիւնների կատարած նշանաւոր գործողութիւններից օրինակ բերելով, ուզեցինք ցոյց տալ նրանց քաղաքական նրբամտութիւնը և նրանց գործողութիւն-

ների տաջուը, որոնցից կախուած է գործի յաջողութիւնն և անյաջողութիւնը:

Եթէ սրբ Օրմանեանը քննադատէր այն, ինչ որ իսկապէս կրիտիքայի չի դիմանում և Պատրիարքարանի արխիւում փառող փաստաթղթերով զինուած հանդէս գար,—դրանով մի մեծ ծառայութիւն արած կը լինէր ոչ միայն հայ ժողովրդին ու հայ յեղափոխական կազմակերպութիւններին, այլև հայկական չարատանը դատին: Բայց դրա տեղ պահանջել, որ յեղափոխութիւնը դադարի այնտեղ ուր կեանքի անտանելի պայմանները հենց իրենք են սրում յեղափոխութեան ժանիքները, առանց Պատրիարքի, Կաթողիկոսի և Սուլթանի կամքը հարցնելու, դա աւելի քան քննադատելի է:

Սրբազն Պատրիարքը շատ լաւ գիտէ, որ Կովկասն այժմ գտնուում է աւելի քան վտանգաւոր դրութեան մէջ, լարելով ոչ միայն կազմակերպութիւնների, այլև ամբողջ ժողովրդի ուշադրութիւնն ու էնէրգիան, այնուամենայնիւ տեղական մանը դէպքերին յեղափոխական նշանակութիւն տալով վախենում է սարսափելի դէպքերի կրկնութիւնից: Բայց Մաղաքիա Սրբազնը պէտք է գիտնայ, որ այժմ Թրքաց Հայաստանում յեղափոխութիւն չը կայ և չի էլ կարող լինել: Իսկ եթէ բարբարոսական ուժգին հովերը հրահրելով սոխրի տակ թաղուած կայծերը, երբեմն բռնկեցնում են նրանց, այդ բռնկումները մարել չի կարող ոչ Սրբ. Օրմանեանը իւր բաղաքականութեամբ, ոչ յեղափոխական կուսակցութիւնները, թէկուզ սրտով էլ ցանկանալիս լինեն և ոչ մի ալլ մարդկային ոյժ: Մենք տեսանք որ Արմենեան կուսակցութիւնը յոգնելուն պէս, լոյս ընկան Հնչակեանները, իսկ սրանք էլ թուուալանալուն պէս, գլուխ բարձրացրեց Դաշնակցութիւնը Պատճառը շատ պարզ է. քանի որ հայի գոյութեան պայմանները Թիւրքիայում չեն փոխուի, թէկուզ Դաշնակցութիւնն էլ Ս. Պատրիարքի առաջարկութեան անսալով զինաթուփ լինի, հաւատացած ենք որ անսիջապէս ծնունդ կառնի մի ուրիշ կուսակցութիւն և այսպէս շարունակ, մինչև որ՝ ինչպէս ասած է՝ կամ կուժը կը կոտրի կամ կուլան:

Եթէ Պոլսի ամեն, Պատրիարքը Վեհ. Կաթողիկոսին դիմելու տեղ ուղղակի դիմէր իրեն՝ Սուլթանին և անկեղծօրէն բացատրէր թէ իրերի այժմեան դրութիւնը և թէ ամբողջ ազգի արամաղրութիւնը—նրա քաղաքականութիւնը տրամաբանութիւնից զուրկ չէր լինի, ընդհակուակը ամբողջ հայութիւնը կը ճայնակցէր իրեն: Հային տանջող, հալածողը ոչ քիւրդն է, ոչ թուրքը, ոչ պարսիկը—այլ միահեծան բռնակալութիւնն է: Սուլթանը

միակ անձնաւորութիւնն է, որ կարող է վերջ դնել Թիւրքիոյ հայերի յեղափոխութեան, սակայն ոչ բռնի ոյժով, այլ լայն մարդասիրութեամբ։ Պարսկաստանի մի բուռն հայերը, պաշտում էին Նասրէդին Շահին, այսօր էլ պաշտում են Միւզաֆէրէդ-դին Շահին, որովհետև իրանի այդ երկու նշանաւոր միապետները իրենց հպատակ հայերի վրայ նայել են անկեղծ հաւատքով ու վստահութեամբ և անզուգական անաշառութեամբ։ Պետերբուրգի ու Գօլսի ինտրիգանները շատ անգամ են փորձել խախտել Շահերի հայրական վստահութիւնը, վարկարեկ անել հայերին—այդ նրանց չի յաջողուել Ահա այդ պատճառով էլ, —չը նայերով որ կայ նաև Պարսկա-Հայաստան, — հայկական յեղափոխութիւն Պարսկաստանում չի եղել չը կայ և չի լինի, քանի որ Արեգակնախավայլ Շահի կառավարութիւնը կը շարունակի հային պարսկից և պարսկին հայից չը դատել...

Բայց այդպէս չէ ոչ Թիւրքիոյ Հայաստանում, ոչ Ռուսահայաստանում. այստեղ կեանքը դարձել է դժոխք. և այդ դժոխքի ստեղծողը բռնակալութիւնն է, որի սանձարձակ կամայականութիւնը չի ճանաչում ոչ մի սահման։ Բռնակալութիւնը մեղ ուզում է ջնջել—այն ինչ մենք ապեն ենք ուզում, ապրել որպէս ազգ, որպէս ուրոյն ընտանիք մարդկային ազգի մեծ ընտանիքի մէջ։ Մենք պատրաստ ենք ընդունելու այն վարդապետութիւնը թէ կրօն, ազգ, հայրենիք նախապաշառումներ են. միայն այդ վարդապետութեան աշակերտ կարող ենք գրուել այն ժամանակ, երբ մեղ տիրապետողները նախ իրենք օրինակ ցոյց տան։ Բայց քանի որ մեզնից շատ աւելի հզօր ազգերը յանձին իրենց կառավարութիւնների կը շարունակեն մեր հայրենիքը յափշտակել յօդուտ իրենց, կը ձգտին մեր լեզուն կորելով, իրենցը մեր բերանի մէջ դնել, կաշխատեն մեր ազգով իրենց ազգի որովայնը լցնելու և այն—այս դէպքում մեղ մնում է մի բան, այն է հետեւել թէկուր նեղ ազգային քաղաքականութեան, որի նշանաբանը լինի — արտարոյ հայութեան չիք փրկութիւն։

Ուրիմն ներկայ պայմաններում մեղ աւելի ձեռնտու է շարունակել ինքնապաշտպանութեան քաղաքականութիւնը այն միջոցներով ու զէնքերով, որն աւելի ձեռնտու է և որի վրայ աւելի շատ կարելի է յոյս դնել։

Այդ անելու համար անհրաժեշտ է միութիւն։

Մշակե, մի այլ քաղաքականութիւն, կը նշանակի ստեղծել մի նոր կուսակցութիւն, իսկ ստեղծել նոր կուսակցութիւն, կը նշանակի ազգի մէջ մի աւելորդ բաժանում ևս աւելացնել։

Ներկայ պայմաններում այդ ամենաին ցանկալի չէ: Divide et iponra—դա բռնապետութեան հաւատամքն է: Արդէն թշնամութեան սերմը ցանելով մեր, բիւրդերի, պարսիկների, վրաց և ուրիշների մէջ բռնապետութիւնը ուրիշ միտք չունէր, եթէ ոչ բաժան բաժան անելով, ամենքին էլ հեշտութեամբ տիրել:

Ուրեմն մենք չը պիտի ձգտենք նոր կուսակցութիւն ստեղծելու, յանուն ինչ գաղափարի էլ կուզէ լինի, այլ պէտք է աշխատենք ինքնապաշտպանութեան դրօշակի տակ միացնել բոլոր կուսակցութիւններին, բոլոր դասակարգերին: Յեղափոխական կազմակերպութիւնները միութեան անհրաժեշտ պահանջը վաղուց են զգացել, բայ այդ նրանց չի լաջողուել նրա համար, որովհետեւ ոչ մի կողմը չի ուզեցել խոստովանելու, որ իւր թանն էլ թթու է: իսկ ժողովուրդը հնարաւորութիւն չի ունեցել ոչ նրանց թանի համը տեսնելու, ոչ կարծիք յայտնելու:

Այժմ օգտուելով մամուլի ու խօսքի ժամանակաւոր ազատութիւնից, պէտք է հնարաւորութիւն տալ, որ ժողովուրդը բարձրացնի իւր հեղինակաւոր ձայնը, տայ իւր անաշառ վճիռը ու ձեռքն առնի միութեան գործը, որի անհրաժեշտութիւնը զգում է ամեն մի հայ:

Միութիւնը ոյժ է, իսկ ոյժն իրաւունք:

Ազգային բաղաբականութիւնից առաջ ստեղծենք ազգային միութիւն: Եւ թող այդ միութիւնը լինի մեր առաջին և հաւատարիմ դաշնակիցը:

MARS